



7(581)

20.03.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԻՐ

Lusarar

ԻՆՔՆԱՄԵԿՈՒՄԱՆԱՆՈՒ ԵՎ ԱՊԱՆԻՏԱՐԵՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Այսօր աշխարհում ամենաքննարկվող թեման կորոնավիրուսն է: Սկիզբ առնելով մի երկրում՝ Չինաստանում, այն տարածվել է ամբողջ աշխարհում: Ամեն պահ համաճանաչում նոր տեղեկատվություն է տարածվում այս աղետի մասին: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարել է պանդեմիա, այսինքն՝ համավարակ կամ համաշխարհային վարակ: Երկրները բերված են համար 1 պատրաստության: Ուսումնական հաստատություններում դադարեցված են պարապմունքները, չեղյալ են հայտարարվել մարզական, մշակութային զանգվածային միջոցառումները, կանգնեցված են զբոսաշրջային երթևեկները, կանգնեցված են որոշ ավիաթիվեր: Պաշտպանվելու համար մարդկանց խորհուրդ է տրվում չչփվել միմյանց հետ, ինքնամեկուսանալ: Որոշ երկրներում մարդիկ անցել են տնային ռեժիմով աշխատանքի, ման են գալիս տիեզերագնացի հազուստով, հակազգով... Թվում է, այս ամենը ֆանտաստիկ կինոյի ժանրից է, որը շատ դեպքերում չենք էլ ուզում մայել՝ իրականության հետ ոչ մի աղերս չունենալու պատճառով: Բայց պարզվում է, իրողություն է. առաջադիմաբանությունից մինչև իրականություն մեկ քայլ է:

Չարը երկրի վրա շատացել է: Մարդկությանը նոր մարտահրավեր է նետված: Այս անգամ դա «կորոնավիրուս» անունն ունի: Ոչ մի երկիր, անգամ ամենազարգացած, ապահովագրված չէ: Թե ովքեր կկարողանան դիմակայել՝ կախված է նրանից, թե ինչքանով են այդ երկրները պատրաստված և ինքնակազմակերպված:

Մարդկությանը նետված մարտահրավերներ տարբեր դարաշրջաններում եղել են: Իսկ ամենաառաջինը եղել է Համաշխարհային ջրհեղեղը: Աստվածաշունչը հայտնում է, որ Ջրհեղեղից առաջ մարդկանց չարությունը շատացել էր երկրի վրա, «երկիրն ապակալել էր ճշմարիտ Աստծո աչքում, քանի որ լցված էր բռնությունով և սեռական անբարոյությամբ (Ծննդոց: 11): Ուստի Աստված որոշեց երկիրը մաքրել չարությունից և լավ մարդկանց նոր կյանք սկսելու հնարավորություն տալ: Աստված զգուշացնում էր գալիք դժբախտությունների մասին, սակայն մարդիկ արհամարհեցին նրա նախազգուշացումները, և ջրհեղեղը եկավ սրբեց տարավ նրանց: Փրկվեց միայն Նոյն իր ընտանիքով, որը լսեց Աստծո հորդորները՝ մեկուսանալ տապանի մեջ և մնալ այնքան ժամանակ, մինչև ջրերը ետ կքաշվեն: Մեկուսացման քառասուն օր ու զիշեր անհրաժեշտ եղավ մինչև նոր կյանք սկսելը:

21-րդ դարի համաշխարհային նոր ջրհեղեղի՝ համաշխարհային վարակի մասին ամենուրեք լսում ենք նախազգուշացումներ: Վարակը շրջում է աշխարհով մեկ. նախազգուշացումը տրված է, փնտրում է նրանց, ովքեր չեն կատարում իր պատվիրանները. կարգապահ չեն, ինքնակազմակերպված չեն, չեն սիրում միմյանց:

Ասում են՝ չարիքից խուսափելու համար ամենաանհրաժեշտ միջոցը ինքնամեկուսացումն է: Բայց այդ ինքնամեկուսացումը չպետք է հասկանալ սոսկ որպես ֆիզիկական հեռացում: Սա մի առիթ է զուգե, որ յուրաքանչյուր զգանք մեզ Ահեղ Դատաստանի առաջ ու մայեք մեր ներսը, ինքներս հաշիվ տանք մեզ, մաքրվենք հոգու աղտերից, ապաշխարենք: Երկիր մոլորակը ծանրացել է մարդկության մեղքերից, կուտակված բացասական լիցքերից այն ուղղակի կարող է պայթել: Փրկենք ինքներս մեզ և երկիրը: Վերջին օրերի զգացումները մի՞թե չեն հուշում, որ ամեն ինչ ունայն է, և փող, հարստություն մի օր հողս կցնդեն: Հավիտենականը Երկրի իշխանությունն է: Երկրի վրա պիտի ապրես այնպես, որ արժանի լինես Երկրի իշխանությանը:

Մոլի հավատացյալ չեմ, բայց այս մտքերն են անընդհատ պտտվում գլխումս: Պարփակվենք յուրաքանչյուր մեր ներսի նոյան տապանում և հուսանք, որ այս անգամ էլ այն կիջնի Արարատ լեռան վրա:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵՆՔ ՄԵՐ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅԱՄ



Մարտի 16-ին ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, առողջապահության նախարար Արայիկ Բաղդյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը միացյալ մամուլ ասուլիսով քննարկեցին «Երկրայացեալու կորոնավիրուսի հետ կապված ընդհանուր իրավիճակը մեր հանրապետությունում, կառավարության կողմից իրականացվող միջոցառումները, հանրության կողմից անհրաժեշտ քայլերը և սահմանափակումները՝ ընդհանուր ճակատով այս մարտահրավերի դեմ պայքարելու համար:

ԼԻՆԵՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՆԵՆԱԿՈՒՄ Ե ԼԻՆԵՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ

ԱՀ առողջապահության նախարար Արայիկ Բաղդյանն իր ելույթը սկսեց մի փոքր հեռվից: 2019թ. դեկտեմբերի երկրորդ կեսից Չինաստանում հայտարարեցին, որ Ուհան նահանգում հայտնաբերվել է նոր կորոնավիրուս, և 2020թ. հունվարի 22-ին այդ նահանգում հայտարարվեց կարանտին: 12 մլն-անոց քաղաքը կարծես դատարկվեց, քանի որ նրա ամբողջ բնակչությունն ինքնամեկուսացվեց: Դրանից հետո շարունակվեց Չինաստանի մյուս քաղաքներում, նահանգներում հայտարարվել կարանտին: Սուտ մեկուկես ամիս հետո այդ քաղաքներում արձանագրվեց հիվանդության աճի կանգ: Ա. Բաղդյանն այս օրինակի վրա ցույց տվեց, որ բազմամիլիոնանոց այդ քաղաքում հաջողության են հասել հիվանդության դեմ պայքարում, և հաջողության գաղտնիքը հասարակության համախմբվածության և գրագետ մոտեցումն էր, որի ամենակարևոր բաղադրիչը ամենատարրական հիգիենայի կանոնների պահպանումն էր և հնարավորինս ինքնամեկուսացումը: Այսօր աշխարհը բոլորին իրազեկում է, որ պետք չէ հայտնվել մարդաշատ վայրերում, արգելվել են բոլոր զանգվածային միջոցառումները, փակվել ռեստորաններ, համալիրներ, արգելվել են հարսանիքները, ծնունդ-կնունքները և այլն: Որպես համակարգի պատասխանատու՝ Ա. Բաղդյանը նպատակահարմար է գտնում նաև առաջիկա համապետական և նախագահական ընտրությունների կապակցությամբ սկսված քարոզչական աշխատանքներում մարդկային կուտակումներից խուսափելը, որոնք հիվանդության տարածման մեծ ռիսկեր են պարունակում:

Առողջապահության նախարարը այդքանով հանդերձ վստահեցրեց, որ կորոնավիրուսն այնքան էլ սարսափելի չէ, քանի որ աշխարհում կան տարբեր հիվանդություններ, որոնց մահացությունների և հիվանդությունների թիվը տարվա կտրվածքով մի քանի անգամ ավելի է: Ուղղակի քանի որ կորոնավիրուսը նոր է ի հայտ եկել, և աշխարհում դեռ չի հայտնաբերվել դրա դեմ դեղամիջոց կամ պատվաստանյութ, դրա համար է այդքան կոչ արվում հնարավորինս

խիտ պահպանել այն բոլոր կանոնները, որոնց մասին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն անընդհատ հայտարարում է լրատվամիջոցներով, և մենք էլ պետք է օրինակ վերցնենք այն երկրներից, որոնք այսօր այդ մարտահրավերներին դիմակայել են, հեռու չգնանք, հենց Հայաստանում, որտեղ կան կորոնավիրուսի հաստատված դեպքեր, ինչպես են պայքարում դրա դեմ:

ՕՊԵՐԱՍԻՎ ՇՍԱԲՆ ԱՇԽԱՏՈՒՄ Ե 24-ԺԱՄՅԱ ՌԵՇԻՄՈՎ

Ա. Բաղդյանը տեղեկացրեց, որ հունվարի 22-ին, երբ Ուհան նահանգում կարանտին հայտարարվեց, նույն այդ օրերին ԱՀ նախագահի համեմատարկությամբ Արցախում ստեղծվեց օպերատիվ շտաբ, որում ներգրավված են ոչ միայն առողջապահության, այլև շահագրգիռ գերատեսչությունները: Այսինքն՝ Արցախում անմիջապես արձագանքեցին աշխարհում ազդարարված տագնապին: Եվ մինչ օրս 24-ժամյա աշխատանքներ են իրականացվում այդ ուղղությամբ: Խուճապի մատմվելու կարիք չկա, բայց միևնույն ժամանակ չպետք է ձեռքերը ծալած սպասել, թե երբ առաջին փորձանմուշը դրական արդյունք ցույց կտա, որպեսզի սկսենք այս կողմ-այն կողմ ընկնել՝ հիվանդության առաջն առնելու համար: Խուճապի մեջ ընկնել պետք չէ. դա միայն կխանգարի գործին, բայց զգոն լինել՝ անպայման պետք է, կոչ է անում Ա. Բաղդյանը՝ վստահեցնելով, որ օպերատիվ շտաբն առաջին իսկ օրվանից գիտակցում է բարձր պատասխանատվություն և բոլորին ու յուրաքանչյուրին հորդորում է ունենալ նույնը իր ընտանիքում, շրջապատում:

Մեր քաղաքացիներին կարող են անհանգստացնել որոշակի պահերի դեղատներում բացակայող բժշկական դիմակները կամ ախտահանիչ նյութերը: Ա. Բաղդյանը տեղեկացրեց, որ այս պահի դրությամբ մեր բոլոր բուժօգնականներում բավարար չափով պահեստավորված դիմակ օգտագործման պարագամներ, ախտահանիչ նյութեր կան: Դա օպերատիվ շտաբի մտահոգության առարկան է առաջին օրից: Բայց եթե, Աստված մի արասցե, այնպիսի իրավիճակ ստեղծվի, որ ստիպված լինեն դրանք մատակարարել բնակչությանը, մարդիկ իրենք էլ պետք է հոգան տնային պայմաններում դրանք ստեղծելու մասին: Ավանդական, սովետական մեթոդները կան, որոնք նույնիսկ ավելի լավ են, քան այս միանվագ օգտագործման դիմակները: Ընդամենը պետք է մաշկյան կամ մեկ այլ կտոր մի քանի տակ ծալել, կարել, պոչեր կպցնել, և ահա ձեզ դիմակ, որը անեն 1-2 ժամը մեկ օգտագործելուց հետո պետք է լվանալ: Իսկ ախտահանիչ նյութերի փոխարեն, եթե դրանք չկան, պետք է ձեռքերը համախառն լվանալ օժանդակ՝ երկար պահելով հոսող

ջրի տակ կամ մաքրել սպիրտ պարունակող միանգամյա անձեռոցիկներով, որն օգտագործելուց անմիջապես հետո պետք է նետել փակ աղբարկղը:

Ա. Բաղդյանն ասաց նաև, որ սահմանափակումներով կարող ենք մաքրությունն ապահովող բոլոր միջոցները կրկնապատել են բուժօգնականներում, պլանային բոլոր վիրահատություններն ու հետազոտությունները խիտ արգելվել են, հնարավորինս արգելվել են հիվանդների տեսակցությունները:

Շտաբներ առաջ սուր շնչառական վարակների աճի ակամատես եղանք: Գիտակցաբար մոտենալով հարցին՝ մեկ շաբաթով փակեցին ուսումնական հաստատությունները: Եվ սուր շնչառական վարակների աճի հետ կապված, արդյունքը ակնհայտ էր. երեք անգամ պակասել է:

Օպերատիվ շտաբի որոշմամբ՝ սահմանային անցակետերում 24-ժամյա հսկողություն է սահմանված: Բոլորի նկատմամբ, անկախ քաղաքացիությունից, իրականացվում է ջերմաչափում, բուժանձնակազմը տեղեկացված է, թե ինչ հարցեր պետք է ուղղեն նրանց, ինչ տվյալներ պետք է հավաքագրեն: Եթե քաղաքացին ռիսկային գոտուց է եկել, մեկուսացվում է, եթե ջերմություն ունի, խոր մեկուսացման է ենթարկվում առանձին վայրում: Ա. Բաղդյանը տեղեկացրեց, որ բոլոր շրջաններում ունենք առանձին մեկուսարաններ: Հանրապետությունում առանձնացված է բժշկական հիմնարկ, հարկ եղած դեպքում նաև երկրորդ բժշկական հիմնարկ են նախատեսվելու որպես մեկուսարան, կան նաև այլընտրանքային տարբերակներ՝ հյուրանոցային համալիրներ, ժամբարային տարածքներ: «Մենք էլ ենք պատրաստված, բայց ևս մեկ անգամ մեր ազգաբնակչությանը կոչ ենք անում ընտրել ամենաուղիղ, ամենակարճ ճանապարհը՝ խուսափել մարդաշատ վայրերից: Ամենակարևորը, եթե որոշակի նախաշաններ տեսնում եք ձեզ մոտ՝ հարբուխ, ջերմաստիճանի բարձրացում, փսխումներ, փռշտոց, անմիջապես դիմեք տեղեկանային թերապիային, պոլիկլինիկա, զանգահարեք թե՛ զի՛՛ 30-03 կարճ հեռախոսահամարին: Մենք անմիջապես կարծագանք օրվա ցանկացած ժամին», - ասաց առողջապահության նախարարը:

ԱՇԽԱՏՈՒՄ Ե 24-ՇԱՄՅԱ ՌԵՇԻՄՈՎ

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանն իր խոսքում ասաց, որ իրենց կողմից կատարված գործողություններն արագ արձագանքման գործողություններ են: Արցախում դպրոցները և նախադպրոցական հիմնարկները փակվել էին, երբ դեռ Հայաստանում կորոնավիրուսի հաստատված դեպք չկար: Նպատակը մեկն էր՝ պահպանել երեխաների, մեր ազգաբնակչության առողջությունը: **2**

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ԸՆԴՈՒՄ ԿԵՂՃԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«Մերոպ Մաշտոց» համալսարանի (ՄՄՀ) նախաձեռնությամբ Ստեփանակերտում մարտի 14-ին անցկացվեց միջազգային գիտաժողով «Պատմություն և քաղաքականություն. կեղծարարություն, Ֆորիա, առասպելաբանություն» թեմայով: Մասնակցում էին գիտնականներ և մասնագետներ Արցախից, ԳԳ-ից, ՌԴ-ից: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՄՄՀ ռեկտոր Դոնարա Գաբրիելյանն ասաց, որ համալսարանն իր Կովկասագիտության կենտրոնով մշտական ուշադրության է արժանացնում նշված թեման և իր շուրջը համախմբելով Արցախի բարեկամներին՝ փորձում է հակահարված տալ Ադրբեյջանի հակահայ քարոզչամեթոդներին:

ՄՄՀ արոնեկտոր, Կովկասագիտության կենտրոնի ղեկավար Դարիբ Բաբայանը կարևորեց թեմայի հրատարակությունը՝ ընդգծելով, որ այսօր Ադրբեյջանում հայատյացությունը քարոզվում է պետական մակարդակով, ինչպես նաև ժխտվում է 1988-1991թթ. Սոււմգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլ քաղաքներում իրականացված հայերի ցեղասպանության քաղաքականությունը:

Գիտաժողովում հնչել են ավելի քան երկու տասնյակ զեկուցումներ:

Կովկասի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը խոսել է այն մասին, որ այսօր պատմական հիշողության պատերազմները դառնում են ավելի ու ավելի հրատապ գիտական ռիսկոլոգներ: Պատմական հիշողության քաղաքականությունը ներկայացվում է որպես նպատակին հասնելու գործիք, պատմական շարադրանքներ ստեղծելու միջոց, որն էլ օգտագործվում է քաղաքականության մեջ:

Այս համատեքստում քննարկելով Ադրբեյջանի օրինակը՝ նկատում է, որ իր գոյության հարյուր տարում այս պետությունը փոխել է իր պատմական տեսակետները՝ մի դեպքում որպես թուրքական կոնցեսցիա, մեկ այլ դեպքում՝ ալբանական կամ ալանական, ընդհանրության մեջ՝ հակահայկական: «Այդ ազգն ասում է՝ չխանգարեք մեզ հավատալ մեր պատմական վարկածին, թողեք մեզ համարեք այն, ինչ ուզում ենք պատմությունից: Ադրբեյջանցիները չեն ուսումնասիրում պատմական նյութերը, նրանք փնտրում են իրենց համար արժանապատվություն: Եթե այդ արժանա-

պատվությանը պետք է հասնել կեղծարարությամբ, թող լինի կեղծարարություն: Դա ճշմարտություն է, թե սուտ, երկրորդական նշանակություն ունի, եթե չասենք զրոյական: Խոսքը գնում է ազգի գոյատևման, ինքնության մասին: Այո, ադրբեյջանցին համեմատաբար նոր ազգ է և ազգ է, որը գոյանում է աշխարհի մասին իր պատկերացումները շրջապատից ու ստեղծում իր պատմությունը մեր աչքի առաջ: Եվ աշխարհում են ոչ միայն պատմաբանները, այլև պետությունը»: Բանախոսը օրինակ բերեց բոլորովին վերջերս Ալիևի պահվածքը



պատմական քարտեզի առաջ, երբ նրա վրա չի տեսել Ադրբեյջանի անունը, և որտեղ գրված էր միայն Ուրարտու: Նա գայրացել էր, թե այդ քարտեզով ինչ պատկերացում պիտի կազմեն ադրբեյջանցի երեխաները իրենց «պատմական» հայրենիքի մասին: Իհարկե, նա դրանով չի ուզում ասել, որ պետք է ուսումնասիրել պատմական ճշմարտությունը, այլ ուզում է, որ «ստեղծեն» դա: Ա. Իսկանդարյանի կարծիքով պատմական ճշմարտության մասին գիտական լեզվով վիճելը Ադրբեյջանի հետ անհնար է, քանի որ նա ոչ թե հաշվել կամ այրուբեյց չգիտի, այլ որ նա ադրբեյջանցի է և փորձում է ստեղծել շարադրանք, որում իր ժողովուրդը հարմարավետ կապի: Մեր պետությունը պետք է անի հետևյալը. դրամաշնորհներ տա և պատմական փաստաթղթերը տարածի ամենուրեք: Ինչպես նաև ընդարձակի պատմական շարադրանքի շրջանակները: Չպետք է սահմանափակվել միայն Խոջալուով. «Խոջալուում մեր պատմության նույնպիսի մաս է, որպիսին Բաքվի ջարդերն են, Կիրովաբադը, Շամխորը, Դաշքեսանը, Նախիջևանը, Ջուղայի խաչքարերը: Լռել չի կարելի»: Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր Մաքսիմ Վասկովի (Հարավա-

յին դաշնային համալսարան, Ռուսաստան) թեման էր՝ «Պատմական հիշողությունը Կովկասյան մակրոտարածաշրջանի երկրների տեղեկատվական պատերազմներում և միջպետական հարաբերություններում»: Նա պետական հիշողությունը ներկայացրեց երեք տեսանկյունով՝ որպես տեղեկատվական պատերազմների գործիք, փոխզիջման հասնելու և համագործակցության ու ինտեգրման գործիք:

Յայ-ռուսական համալսարանի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Գառնիկ Ասատրյանը ներկայացրեց թալիշական շարժման պատմությունը ու արդի վիճակը: Նրա նկատմամբ մեր շահագրգռվածությունը բխում է թալիշական մշակույթի և լեզվի զարգացմանը հայ ժողովրդի հազարամյա մարդասիրական առաքելությունից: Բանախոսը պարզաբանեց, որ հայ ժողովուրդը, սկսած Մետրոպ Մաշտոցից, միշտ մասնակցել է հարևան ժողովուրդների լուսավորության զարգացմանը: Դա միշտ եղել է. «Մեր նպատակն է, որ թալիշները պահպանեն իրենց ինքնագիտակցությունը ու ինքնատիպությունը և ի վիճակի լինեն դիմակայել ասիմիլյացիայի կործանիչ քաղաքականությանը: Քաղաքական ինչ հեռանկար ունեն թալիշցիները Ադրբեյջանում՝ շատ կարևոր է, բայց դա հենց իրենց՝ թալիշցիների գործն է»:

Հասարակական և քաղաքական գործիչ Լարիսա Ալավերդյանը Ադրբեյջանի օրինակով ներկայացրեց առասպելապատմությունում ու ատելությունում քարոզչությունը որպես ցեղասպանական վտանգի նշաններ:

Կովկասագիտության կենտրոնի գիտաշխատող, գիտաժողովի համակարգող Դոմիկ Ավանեսովը բացատրեց ադրբեյջանական դպրոցական գրականության մեջ Խոջալուի իրարժանությունների կեղծումը:

Արցախի բարեկամ, Սևծովյան կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտից Վլադիմիր Ջախարովը իր մեկնաբանություններով հանդերձ «Ռուս-իրանական բարեկամության միության» մեղադրյալ պարզապարզ ՄՄՀ ռեկտորին ու պրոռեկտորին, գիտաժողովի մի խումբ մասնակիցներին:

ՀԱՄԱՋԵՄԱՐՎԱԾԻՆ ՄԱՐՏԱԿՐԱՎԵՐԻՆ ԴԻՍԱԳՐԱՎԵՆՔ ՄԵՐ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅԱՄԲ

Համակարգված աշխատանք է կատարվել՝ դրանով իսկ նպաստելով երեխաների առողջության պահպանմանը, մյուս կողմից էլ բեռնաթափելով առողջապահական համակարգը, որպեսզի ամբողջ ուշադրությունը սևեռվի կորոնավիրուսի դեմ պայքարի աշխատանքներին: Երկրորդ անգամ են դադարեցվել ուսումնական պարապմունքները, չնայած երեխաների հաճախելիությունը բավականին բարձր էր այդ օրերի համար՝ ընդամենը 8 % ամբողջ հանրապետությունում: Նման որոշումը պայմանավորված էր ԳԳ-ում կորոնավիրուսի հաստատված դեպքերով: Այս պահի դրությամբ մինչև մարտի 24-ն են դադարեցված ուսումնական պարապմունքները, բայց ըստ անհրաժեշտության կերկարաձգվի հարկադիր արձակուրդը: Այս ընթացքում ուսուցիչները նույնպես չեն հաճախում դպրոց: Ընդամենը սահմանված է հերթապահություն բոլոր ուսհաստատություններում, բայց դա չի նշանակում, թե մանկավարժներն ու աշակերտները պարապմունքի են մատնված: Նախարարը հրահանգել է երեխաների հետ աշխատել տարբեր ձևերով: Համաճարարել առաջադրանքներ, տեսակապով, հեռախոսով դասընթացներ իրականացնել: Նրանց համար նախատեսվում են դասընթացներ առցանց ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Նախարարը կոչ արեց ուսուցիչներին, որոնք իրականացնում են նման աշխատանքներ, կիսվել իրենց փորձով. «Ընդհանրապես բոլոր ճգնաժամերը նոր հնարավորություններ են ենթադրում: Ուզում են, որ այս ժամանակահատվածն օգտագործենք նոր հնարավորություններ բացահայտելու, որովհետև մարտահրավերներ միշտ լինելու են, և մենք պետք է կարողանանք ավելի ճկուն աշխատել»:

Ն. Աղաբալյանը կոչ արեց, որ բոլորը՝ մեծից փոքր, ցուցաբերեն բարձր գիտակցականություն, պատասխանատվություն, որ վարակը չենթափանցի ընտանիք: Շատերը հանգստացել են՝ իմանալով, որ երեխաները ռիսկային խմբում չեն և ավելի քիչ են վարակվում կամ ավելի հեշտ են տանում հիվանդությունը, բայց եթե երեխան վարակակիր է, ուրեմն՝ նա վտանգ է ընտանիքի ու մեծերի համար:

«Ամեն ինչ պետք է անենք, որ համակարգված աշխատանքով կարողանանք դիմակայել: Սա էլ պատերազմ է, որից պետք է դուրս գանք հաղթանակով», - ասաց Ն. Աղաբալյանը:

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՄՄԱՆՈՒՄԱԿՈՒՄՆԵՐ ԵՄՏՐԵԼ

Ամփոփելով ատլիսը՝ պետնախարար Գ. Մարտիրոսյանը, որը նաև միջգերատեսչական հանձնաժողովի նախագահն է, ներկայացրեց հանձնաժողովի որոշումը պետական մարմինների գործունեության որոշակի սահմանափակումների վերաբերյալ: Չեղարկվել են պետական մարմինների աշխատողների արտասահմանյան գործուղումները, բացառությամբ անհետաձգելի դեպքերի: Չեղարկվել են պետական մարմինների կամ կազմակերպությունների կողմից կազմակերպվող բոլոր զանգվածային միջոցառումները՝ մարզական, մշակութային և այլ: Մարտի 16-ից ցուցում է տրված հնարավորին չափ կիրառել հեռավար աշխատանքի եղանակը՝ առաջին հերթին նրանում ընդգրկվելով այն ծնողներին, որոնք ունեն նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի, ինչպես նաև հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաներ, հղի կանանց, 60 և ավելի տարիք ունեցող աշխատողներին, որոնք գտնվում են ռիսկի բարձր խմբում: Այդ մեծիմը կիրառել նաև նրանց նկատմամբ, ովքեր ունեն առողջական խնդիր:

Մարտի 14-ից սկսվել է 15-ից ավելի խիստ ռեժիմով շարունակվում է հսկողությունը սահմանային անցակետերում: ԱՅ երկու հսկիչ կետերին՝ Խարխափուտին և Աղավնոյին ավելացվել են հսկողական աշխատանքները Խնձորեսկի և Կովսական-Կապան ճանապարհների վրա: Այդ ճանապարհները հատելիս նույնպես քաղաքացիները պետք է ջերմաչափվեն, և այլ համապատասխան միջոցառումներ իրականացվեն նրանց նկատմամբ:

Այն հիմնարկներում, որոնց գործունեությունը կապված է քաղաքացիների այցելությունների հետ, ինչպիսիք են գրադարանները, թանգարանները, պատկերասրահները, աշխատանքը նույնպես նշյալ օրվանից կասեցված է առնվազն մեկ ամսով:

Արցախ այցելելու համար զբոսաշրջիկներին այս ժամանակահատվածում մուտքի արտոնագիր չի տրամադրվի:

Միջքաղաքային տրանսպորտը եթե մինչև այս քան օրը փխտահանվում էր մեկ անգամ, այսօրվանից արդեն՝ օրական երկու անգամ: Ժամանակ առ ժամանակ նրա օդափոխումը պարտադիր է:

Հնարավորինս խուսափել փակ տարածքներում մարդկանց մեծ քանակի ներկայությունից:

Ամփոփելով՝ պետնախարարը ևս մեկ կարևոր կոչ արեց. չհավատալ հանրության մեջ տարածվող տարբեր հակասական լուրերին: Տեղեկատվությունը քաղել միայն պաշտոնական աղբյուրներից. «Մենք առավելագույնս թափանցիկ և բաց ենք աշխատելու և կորոնավիրուսի կանխարգելման աշխատանքների կազմակերպման ողջ տեղեկատվությունը օպերատիվ տրամադրելու ենք հանրությանը, որովհետև հասկանում ենք, որ սա առաջին պայմանն է անկոստները, տարբեր խուճապային տրամադրությունները թույլ չտալու համար»:

Պետնախարարը համոզված է, որ քաղաքացիները կգիտակցեն, որ այս ամենն արվում է նրանց առողջության պահպանման համար, և բոլոր սահմանափակումներին կվերաբերվեն ըմբռնունով ու կցուցաբերեն բարձր քաղաքացիական գիտակցություն: Նա հանրության անունից շնորհակալություն հայտնեց բուժաշխատողներին՝ այս օրերի նրանց գերծանաբերված աշխատանքի համար: Իհարկե, նրանց վրա մեծ պատասխանատվություն է դրված: Բայց քանի որ սա ամբողջ հասարակության խնդիրն է և միայն առողջապահական, պետական մարմինների ուժերով հնարավոր չէ լուծել, պետնախարարը ևս մեկ անգամ կոչով և հորդորով դիմեց հասարակությանը՝ խուճապի չմատնվել, լինել զգոն, կատարել բոլոր հրահանգները:

ՍՏԵՂԾՎԵԼ Ե՝ «ԱՐՃԱՄ» ԳԻՏԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԳՐԱՍԸ



Մարտի 15-ին Ստեփանակերտում կայացել է նորաստեղծ «Արցախ» գիտահետազոտական ինստիտուտ» ի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամիկ միստը: Բացելով այն՝ ի հիմնադրամի գործադիր տնօրեն, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միության (ԱԵԳՄՄ) նախագահ Ավետիք Հարությունյանն ասաց, որ գիտահետազոտական ինստիտուտի հիմնադրման գաղափարը ծագել է 2018թ. Ստեփանակերտում ԱԵԳՄՄ-ի կողմից կազմակերպված՝ գիտության հարցերին նվիրված կլոր սեղանի ժամանակ, երբ քննարկումների արդյունքում առաջարկվել է Արցախում ունենալ գիտահետազոտական կենտրոն կամ ինստիտուտ՝ որպես ուղեղային կենտրոն, որը գիտական հետազոտություններին զուգահեռ ակտիվ համագործակցություն կծավալի արտաքին աշխարհի հետ. «Մեր գլխավոր նպատակն այն է, որ կարողանանք գիտության միջոցով Արցախը ճա-

նաչելի դարձնել աշխարհին, և պատահական չէ, որ մեր կազմակերպության կանոնադրության մեջ հստակ ձևակերպված է նաև նրա առաքելությունը, իսկ առաքելությունը հետևյալն է՝ զարգացնել գիտությունը Արցախում, արդյունքները ներդնել երկրի կենսագործունեության համար ռազմավարական նշանակություն ունեցող բնագավառներում՝ ամրապնդելով հայրենի պետականությունը, գիտության դիվանագիտության միջոցով նպաստել Արցախի Հանրապետության ճանաչելիության բարձրացմանը ու միջազգային ճանաչմանը»:

Հոգաբարձուների խորհրդի միստը վարող՝ հիմնադրամի նախագահ, քաղաքական գիտությունների դոկտոր Խաչիկ Գալստյանը հույժ կարևորեց Արցախում նման գիտական կառույցի գոյությունը և շնորհավորեց իր գիտական թիմի անդամներին վաղեմի երազանքի ի կատար ածվելու առթիվ, այն է՝ Արցախում ունենալ մասնագիտացված գիտական կառույց, որը կյանքի կկոչի հայ ժողովրդի համար ամենակենսական նշանակություն ունեցող խնդիրներից մեկի՝ արցախյան ի հիմնախնդրի հայանպաստ բովանդակության ստեղծումը, գեներացումը և տարածումն ամբողջ աշխարհում: Ըստ նրա՝ Արցախը որպես ինքնիշխան, սուվերեն հանրապետություն, առնվազն պետք է ունենա նման մի քանի կենտրոններ:

Նիստում քննարկվեցին «Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի ռազմավարական ուղղությունները, կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, «Արցախ» հրատարակչության հիմնադրման մասին, կազմակերպական հարցեր:

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1990Թ. ՄԱՐՏԸ

Իմ օրագրից

Օրերս ռուսական և հայկական հեռուստահաղորդումներից իմացա, որ մահացել է ԽՍՀՄ մարշալ (կարծում եմ, վերջին) Դ.Տ. Յագովը: Այն Յագովը, որին իմ սերունդը լավ է ճանաչում, իսկ այսօրվա սերնդին ծանոթ անուն չէ: Նա ԽՍՀՄ Զինված ուժերի նախարարն էր և 1990թ. հունվարի 26-ին՝ մեր Շարժման այն թեժ օրերին, ԽՍՀՄ ՆԳՄ նախարար Բոգատինի հետ միասին եղավ Ստեփանակերտում, որոնց հետ հույսեր էինք կապում: Այդ այն Յագովն էր, որ 1980թ. Բաքվում տիրող հրեշավոր օրերի, հայկական բարբարոսական ջարդերի ակնմատենն է եղել, որը և համարձակություն է ունեցել թեկուզև ինչ-որ չափով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի 1990թ. փետրվարի 19-ին կայացած երկու պալատների համատեղ դեմփակ նիստում համոզիչ փաստերով հաստատել Բաքվի գիշատիչ գործողությունների նախօրոք մանրակրկիտ, համաձայնեցված կերպով պլանավորված լինելը: Եվ այդ մարդու մահվան լուրը լսելուց դարձյալ դիմեցի օրագրիս, որում կցված է նրա ելույթը պարուհուրի թերթը («Ավանգարդ», 7 մարտի, 1990թ., չորեքշաբթի...): Ինչո՞ւ «Ավանգարդ» թերթն էմ վկայակոչում, որովհետև 1990թ. մարտի 2-ից լույս չէր տեսնում «խորհրդային Ղարաբաղ» թերթը, թերթ, որ մինչև 1989թ. հունվար Ադր.Կոմկուսի ԿԿ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի և Ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ մարզկոմի օրգանն էր, 1989թ. հունվարից՝ ԼՂԻՄ Գերագույն կառավարման կոմիտեի օրգանը, իսկ 1990թ. փետրվարից՝ ԼՂԻՄ մարզային կուսակցական կազմակերպության և Ժողովրդական դեպուտատների խորհուրդների: Ուշադրություն դարձրե՛ք՝ ոչ կուսակցության մարզկոմ կա, և ոչ էլ Ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ մարզկոմ: Ահա այս թերթը, որ մեր Շարժման սկզբից իր կամքից անկախ տարբեր օրգաններով է հրատարակվել, մարտի 2-ից լույս ընծայվելու իրավունք չուներ. թե երբ հաջորդ համարը լույս կընծայվի, չգիտեմ...

1.03.1990թ.: Հիշում եմ, և՛ մանուկ, և՛ երիտասարդ, և՛ հասակ առած ժամանակներս, երբ մարտ ամիսն էր գալիս, ուրախությամբ գոչում էի սիրածս բանաստեղծի տողերը. «Զա՛ն, տեսքիդ մատաղ, զարուն է արդեն»: Իսկ այսօր պարփակված եմ տանը. շարունակվում է հունվարի 29-ից սկսված գործադուլը: Եթե 1989թ. փետրվարի 23-ից հայտարարված գործադուլը ԽՍՀՄ-ում նախադեպը չուներ, ամբողջ մարզի բնակչությունը (համարյա գիշեր-ցերեկ խարույկներ վառած) մինչև 1988թ. մարտի 1-ի լույս 2-ի գիշերը Լեռնին հրապարակում էր, իսկ 1988թ. սեպտեմբերի 19-20-ը ուսուցիչների նստաժողովը ցրելուց հետո քաղաքի բնակչությունը գործադուլային վիճակ ապրեց բազմաժամկետ բնակարանների պատճառաբաններում, որտեղից «Մի-ա-ցում, Գա-յա-ս-տան» գոչումներով շարունակվում էր քաղաքում վիստոյ պարեկներին և ՆԳՄ «զինվորներին», և ինչպես Կարեն Օհանջանյանն է հետագայում գրել, «պատշաճ քայլեր չույցեր» էին, ապա այսօր՝ մարտին, գործադուլը շարունակվում է բնակարաններում. ոչ ոք դուրս չի գալիս փողոց, քանի որ ամեն րոպե ինչ-որ պատճառ կգտնեն և կկալանավորեն: Եթե աշակերտները «գործադուլ», «դասադուլ», «հացադուլ», «նստացույց» հասկացությունները պատմության դասագրքերում էին հանդիպում ու դժվար են պատկերացնում, ապա այսօր ոչ միայն ակամատես են, այլ նաև ակտիվ մասնակիցներն են իրենց հարազատների հետ միասին: Եվ հետաքրքիրն այն է, որ այդ հասկացություններին ավելացել է նորը՝ «նեմգադուլ», որը Բաքվի ծնունդ է, երբ ՆԳՄ գործադուլին ադրբեջանցիները զրկել են շարժումակությունից. փակել են բոլոր ծանապարհները խորհրդային բանակի առաջ:

Ասացի, որ հունվարի 29-ից սկսված գործադուլը շարունակվում է, բայց շատերն այն կարծիքին են, որոնց թվում և ես, որ մեր գործադուլների պատճառների մասին ԽՍՀՄ Ժողովուրդների, նույնիսկ ԽՍՀՄ Ժողովրդական դեպուտատների մեծ մասը չգիտի, որովհետև այդ մասին ոչինչ չեն ասում մասսայական

լրատվության կենտրոնական միջոցները, իսկ մարզում էլ «խորհրդային Ղարաբաղ» թերթի փակումով էլ ինֆորմացիայի սով է սկսվել, և աշխարհից թաքցվում է ճշմարտությունը: Իսկ ճշմարտությունն այն է, որ այսօրվա շարունակվող գործադուլների պատճառը Բաքվում ստեղծված, այսպես կոչված, կազմակոմիտեի մուտքն էր Ստեփանակերտ, որին արցախահայությունը չի ընդունել և չի ընդունում, և ինչպես լրագրող Դաթիկ Իշխանյանն է գրում. «...ներկայիս գործադուլները քաղաքական անհնազանդության, արցախահայությանը ուժի միջոցով նախկին ստրկական վիճակին վերադարձնելու դեմ ուղղված բողոքի արտահայտություն են («Երեկոյան երևան», 22.03.90թ.): Եվ անչափ զայրացած եմ՝ իմաստավոր, որ ԽՍՀՄ ԳԿ Ազգային Գերագույն դեմփակ նիստում համոզիչ փաստերով խորհրդի մարտի 1-ի նիստում հայտարարել է, թե լրացուցիչ քննարկումները Լեռնային Ղարաբաղի մասին նոր դիրքորոշումներ չեն տվել, և 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը մնում է ուժի մեջ: Զարմանում եմ. մի՞թե այս մարդը ծանոթ չէ դեպուտատ Մ.Ս. Պետրուշենկոյի՝ փետրվարի 19-ին կայացած երկու պալատների համատեղ դեմփակ նիստում ունեցած ելույթին, որում շատ պարզ է ասված. «Առաջարկություն են մտցնում, ես կարծում եմ, ընկերներ, որ պետք է հետևյալ կերպ վարվենք: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցից դուրս գալու ելքը ես մի բանում եմ տեսնում: Անշուշտ, Լեռնային Ղարաբաղը լուր պատրվակ է: Չլինել Լեռնային Ղարաբաղը, կլինել մեկ ուրիշ բան: Բայց, այնուհանդերձ, ես կարծում եմ, որ մենք պետք է մի որոշում ընդունենք, որտեղ ընդգծվի, որ ԼՂԻՄ-ը եղել և մնում է պատմականորեն կազմավորված ինքնավար մարզ Ադրբեջանի տարածքում, մշկի հայ բնակչության գաղափարն իրավունք չի ստանում սահմաններում և միաժամանակ ժամանակավորապես (ընդգծում եմ՝ ժամանակավորապես) պետք է այն դուրս հանել Ադրբեջանի ենթակայությունից և ենթարկել Կենտրոնին, այսինքն՝ Մոսկվային, այնքան ժամանակ, քանի դեռ ադրբեջանական կողմը հայերի հանգստության երաշխիքներ չի տալիս...» («Ավանգարդ», 7 մարտի, 1990թ.): Պետրուշենկոյի ելույթի տեքստը լրիվությամբ կցված է օրագրիս: Մի՞թե Պետրուշենկոյի առաջարկությունը դիրքորոշում չէ, որ չի հասկանում Նիշանովը, այն Նիշանովը, որին ստեփանակերտցիները ետ են քշել օդանավակայանից՝ «կարող սրտունի»:

Ես ուզում եմ, որ այսօրվա սերունդը իմանա, թե ինչ էր և ինչ է իրենից ներկայացնում Ադրբեջանը: Կրկին մեջբերում եմ Պետրուշենկոյի ելույթից. «...Ինչո՞ւ մենք պատասխան չենք ստանում Ադրբեջանի կողմից Նախիջևանի դուրս գալու նկատմամբ Ադրբեջանի ԿԿ-ի և Գերագույն խորհրդի ղեկավարության զարմանալի հանդուրժողականության և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ անհանդուրժողականության մասին հարցերին... Ինչո՞ւ ենք մենք հոշոտման հանձնում թե՛ բանակը, թե՛ ՊԱԿ-ը... Ինչո՞ւ չցուցադրել ՊԱԿ-ի տեսաֆիլմը: Ինչո՞ւ չբազմացնել հունվարի 13-ից մինչև 18-ը ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած բոլոր հանրահավաքների սղագրությունները, հանրահավաքներ, որտեղ կախաղաններ էին տեղադրված, ոչ թե խորհրդանշական, այլ իսկական... Զարց են տալիս. ինչպիսի՞ն է Գ. Ալիևի դերն ու ազդեցությունը: Ի՞նչ պաշտոն է նա զբաղեցնում: Եվ ես Ն.Ռիժկովին խնդրում եմ գեկուցել՝ ում ենթակայության տակ է նա գտնվում, ով է նրան գումար վճարում: Եվ եթե այդ պաշտոնատար անձը հաստատվում է ԽՍՀՄ ԳԿ-ի կողմից, ապա օգտագործելով ժողդեպուտատի կարգավիճակի 11-րդ հոդվածը, ես հարց եմ բարձրացնում այդ մարդու նկատմամբ վստահության մասին. Ալիևի մասին է խոսքը: Բայց, այսուհանդերձ, հարկավոր է փնտրել ավելի խոր արմատները...»: Զարմանալի է, որ այս բազմաթիվ ինչու-ներից ոչ մի պատասխան չի տրվել:

Այժմ՝ Դ. Յագովի ելույթից. «Ադրբեջանում թալանվում էին ոչ թե պարզապես ինչ-որ առանձին փոքր ստորաբաժանումներ, այլ

ռազմականացված պահպանությունը, մարզային զինվորախորհուրդները, ՆԳՄ մարմինները, մեկ անգամ թալանեցին նույնիսկ սահմանապահ ջոկատի պահեստը... Աղղամուն հարձակում է գործվել ռադիոլուկացիոն վաշտի վրա, կապակել են զինվորներին, ոչ միայն ավտոմատներ հափշտակել, այլև շարքից հանել ռադիոլուկացիոն կայանը... Երբ խոսում են (Բաքվում) տանկերի թթուրների տակ զոհված հարյուրավոր մարդկանց մասին, գրպարտություն է: Ամենակրտսեր տարիքով մարդը, որ զոհվել է առաջին երեք օրերի ընթացքում, 14-ամյա մի տղա էր, որը գտնվում էր գրոհայինների շարքում: Ո՞ր են այստեղ երեխաները, իսկ ամենատարիքավոր կինը՝ ծնված 1915թ., մահացել է ինֆարկտից, բայց թաղվել է որպես տանկի տակ զոհված: Յուրաքանչյուր քայլում գրպարտություն, կեղծիք (ադրբեջանցի դեպուտատները բարձրանում են տեղերից և սկսում են դուրս գալ դահլիճից, սեփական նախաձեռնություն չունեն էլ, ուրիշներին են ընդօրինակում, այն էլ՝ գռեհիկ ձևով):

«...Ի դեպ, - շարունակում է ՁՈՒ մինիստրը, - այն ընկերը, որ հեռանում է, Փամայլով է ազգանունը, գիշերն ինձ մոտ եկավ Սելմիկովի հետ, պնդում էր, որ մարտեր են մղվում ուսումնարաններում, Բաքվի ուսումնարաններում, ծովային ուսումնարաններում (մի քանի ադրբեջանցիներ, կանանց ձայն՝ ադրբեջաներեն ինչ-որ բան են ասում): Ես նրանց տվի հետևակի ռազմամեքենան և ասացի՝ գնացեք այնտեղ, գնացին ոչինչ չգտան, ոչ մի մարդ: Բացեցին զինամթերքի պահեստը, քայլեցին, գնացին զննեցին պահեստը... Ոչ մի մարտ, ոչ մի հրաձգություն... Ափսոս, որ դուրս եկան (ադրբեջանցի դեպուտատներին նկատի ունի): Չէ՞ որ պետք է հասնել մնաց սրբապղծության՝ թաղել են 49 մարդ, իսկ փորել են 150 գերեզման: Գնումն ինչի՞, ինչի՞ համար: Ինչո՞ւ: Այս ամենը արվել է այն բանի համար, որ պետք է պատասխանատվությունից խուսափեն իրենց սեփական ժողովրդի առաջ, մեղքը գցեն Կենտրոնի վրա: Այստեղ է ՆԳՄ սերժանտներից մեկը, երկի շատերն են նրան տեսել, որին մի կին է դիմել. «Օգնիր, ես վախեցնում եմ մտնել մուք նրբանցք»: Նա գնում է ուղեկցելու, հենց առաջին իսկ անկյունում նրան շշմեցնում են, քարշ տալիս բնակարան, աչքերը կապում, մերկացնում և ի վերջո տանում են վզին օղակ գցում և նետում գերեզմանոց: Այս սերժանտը կենդանի մնաց, իր մեջ ուժ գտավ, կարողացավ դուրս պրծնել այդ օղակից, եկավ, և այսօր մենք նրան թույլ տվեցինք գնալ մոր մոտ՝ Լեռնիգորա, իսկ 4 զինվորներ մինչև օրս դեռ չեն գտնվել, իսկ եթե ո՞նց էլ գտել ենք, փորները գնդակներով ծակծակած: Ի դեպ, բոլոր զոհվածների գնումը ցույց է տալիս, որ նրանց կեսը թիկունքից է սպանվել... Բանն այն է, որ բոլոր գրպարտները ոչ թե պարզապես շրջապատել էին, այլև շուրջը գտնվող շենքերի երկրորդ հարկերը, այդ թվում նաև մանկական հիվանդանոցը, հիվանդներից, բնակիչներից ազատել էին՝ իմանալով, որ մանկական հիվանդանոցի վրա չեն կրակել: Այնտեղ տեղավորել էին դիպուկահարների, տեղաբաշխել գրոհայիններին, բացի դրանից, հզոր լուսարձակներ էին դրել զինվորական ավանը լուսավորելու համար և դեռ զինվորները մերս չէին մտել, երբ նրանց հրամանով լուսարձակները միացվեցին, և սկսվեց դաժան հրաձգություն... Բնականաբար. երբ զինվորական շարասյուները քաղաք մտան, բոլոր պատուհաններից կրակ էին տեղում, և ես նույնիսկ կասկածում եմ, թե արդյոք դեսանտայինների կրակոցներից են զոհվել խաղաղ բնակիչները, թե՞... Եվ զինվորական դատախազությունը, և քաղաքացիական դատախազությունը ձգտում էին, որ յուրաքանչյուր դիակ բուժվեցնվի, ինչպես հարկն է: Ոչ մի դիակ չտվեցին բուժվեցնման, թե իբր մահանդակներ օրենքները դա թույլ չեն տալիս...

- Ես հանդիպեցի հարգանքներ շնչիսին, - շարունակում է ԽՍՀՄ ՁՈՒ մինիստրը, - նա հայտարարեց, թե մենք այնքան դաժան ենք, որ մի ծեր կնոջ վրա միանգամից 73 գնդակ ենք արձակել: Ես ասում եմ՝ այդ դա չի կա-

րող պատահել, որ մի ծեր կնոջ վրա 73 գնդակ... Նա թե՛ այդպես են ասում: Ես ասում եմ՝ գուցե ծիշտ չեն ասում, թույլ տվեք բուժվեցնեք բոլոր դիակները: Նա թե՛ մահանդակներ օրենքներով այդ բանը չի թույլատրվում:

Ինչպես տեսնում ենք, ԽՍՀՄ բարձր պաշտոնյաների շուրթերից են լսվում Ադրբեջանի նենգությունն ու սուտ քաղաքականությունը և անվատաբեր լինելը, որը և շարունակվում ու շարունակվելու է, որքան գոյություն ունենա այն... Իսկ ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, Դ. Յագովը նշեց. «Ըստ իս, ազգայնականությունը պետք է դատապարտել որպես երևույթ, և վերջիվերջո, հարկավոր է սահմանել այն կարգավիճակը, որը պետք է ունենա Լեռնային Ղարաբաղը»:

Ինչպես սկզբում նշեցի և փետրվար ամսին էլ եմ գրել, այս պետական այրերի ելույթները մեզ ինչ-որ չափով հույսեր էին ներշնչում, և դիմանում էինք մարզի շիկացած վիճակին: Փետրվարին ես գրել եմ, որ ըստ Պրիմակովի առաջարկության, Կենտրոնը թող ԽՍՀՄ-ի կազմից հեռացնի ցանկացած այն հանրապետությանը, ով վախեցնում է հենց ԽՍՀՄ կազմից դուրս գալով, Կենտրոնին կշտամբում է կամ սպառնում, բայց ցավոք, ձեռքս չի ընկել հայամետ դեպուտատ Անատոլի Սորջակի ելույթը, բայց հետագայում ծանոթանալով Հայաստանի թերթերից, հիասթափվեցի, որ նա Հայաստանն ու Ադրբեջանը կշտեքի նույն նժարին է դնում: Սորջակն առաջարկել է. «Երկու հանրապետություններն էլ հանել ԽՍՀՄ կազմից, եթե վեցամսյա ժամկետում նրանք չգտնեն հաշտության ուղիներ: Չգիտեմ, մի՞թե այդ խելոք մարդը, որն առաջարկել է վերջ տալ շրջափակմանը, չի պատկերացնում, որ դրանով երկու ժողովուրդներին մղում է հետագա բախումների: Այսինքն՝ տեղյակ լինելով, դարձյալ հավատներս չենք կորցնում, ամենայն հետաքրքրությամբ հետևում ենք Մոսկվայից տրվող հաղորդումներին ԳԿ երրորդ նստաշրջանի վերաբերյալ, որ արդեն ելույթներում հնչում են երկրում պրեզիդենտական կարգավիճակ մտցնելու առաջարկություններ՝ մշտնապես պրեզիդենտական պոստ մտցնելը ֆեդերացիայի միասնության գրավականը կլինի, որ այս դժվարին իրադրության մեջ անհրաժեշտ է մի այնպիսի իշխանություն, որը բոլոր ազգայնականների մարդկանց իրավունքները պաշտպանելու համար ընդունակ լինել արագ և վճռական գործողությունների: Պրեզիդենտական պոստ մտցնելու գործում հապաղելը կարող է վերջնականապես ապահավելվող հասարակությանը: Հիշում եմ, այդ հարցի քննարկման եռուն պահին մեր դեպուտատներից արժանահիշատակ Յուրի. Իգիթյանը տեղից վեր թռչելով՝ դահլիճով մեկ գոչում է. «Գորբաչովին ամեն իրավունք տվել ենք, ինչ է, պիչակներս է՛լ տանք: Ու հանում է պիչակը վեր բարձրացնում: Այսպես թե այնպես, նստաշրջանը ձայների մեծամասնությամբ անվանական բնույթի վրա արդյունքով պաշտպանեց ԽՍՀՄ-ում պրեզիդենտի պոստ հիմնադրելու և ԽՍՀՄ Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ մտցնելու մասին ԽՍՀՄ ԳԿ նախագահության առաջարկը: **21.03.1990թ.**: Վերջապես այսօր ստացա «խորհրդային Ղարաբաղ» թերթի ընդհատված համարը, որում ընթերցում եմ ԽՍՀՄ պրեզիդենտ Մ.Ս. Գորբաչովի ելույթը ԽՍՀՄ ժողդեպուտատների արտահերթ երրորդ համագումարում: Նա շնորհակալություն հայտնեց, որ իրեն պրեզիդենտ ընտրեցին և... **22.03.1990թ.**: Թերթում տպված է Մ.Ս. Գորբաչովի ելույթը ԽՍՀՄ ԿԿ պլենումի մարտի 16-ի նիստում: Այս համարում ծանոթանում եմ նաև Թաթարական մարզկոմի առաջին քարտուղար Մ. Շայմիևի ելույթին, որը մշում է. «Մենք ոչ մի ակնթարթ չենք կարող տեսադաշտից դուրս թողնել այն, որ ազգային հարցը և ազգամիջյան հարաբերությունները շոշափում են զգացմունքի աշխարհը, մարդու կյանքի հուզական ոլորտը: Ուստի ամեն ինչում անհրաժեշտ է նրբազգացողություն, փոխադարձ հարգանք...», մտածում եմ, իսկ Ադրբեջանը, ամբողջությամբ վերցրած, այդքանը հասկանո՞ւմ է... 

ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏ

Ոչ մի երկիր, ոչ մի դատարան իրավունք չունի դատելու մեր պայքարը:

Սոնթե Մելքոնյան

Ուզում ես լինել հզոր ու հաղթանակող, ամուր կառչիր արմատներդ, այնքան ամուր, որ քաղաքական խորամանկ խաղերը և հին ու նոր աստվածներն անգամ ի գործ չլինեն արդեն քեզ քո հայրենիքից, մասնավոր՝ որ այն պատմական հնամենի ժամանակների ծնունդ է:

Իմ հայրենիքը հպարտ Արցախն է: Ես աշխարհի պերճ ու փառաբանուտաններում չեմ ծնվել, ծնվել եմ աշխարհի սրտում՝ այս սրտի չափ փոքրիկ, բայց սրտի չափ մեծ հողակտորի վրա, որի սահմանն արյամբ է գծված: Այստեղ ամեն բան վեհի ու վեժի մի գույնն ունի՝ հյուսիս ես հյուսիս: Եթե երբևէ լույս աշխարհ գալի մի երկրորդ անգամ, ես էլի ու էլի կկանգնեմ, որ Վարանդա գետի ջրերն ինձ օրորոց դնեին, Քիրս լեռան հայացքի ներքո հասակ առնեի իմ մարմինն ու հոգին...

Մեծացա ու տարիքիս հետ հասկացա, որ գոյություն ունի քաղաքականություն, ազգային շահ ասվածք: Եվ այդ պահից Արցախն ինձ համար դարձավ Արժեք, սրբազնագույն մի Մասունք, մեծագույն Աստված, որի բազմին անգամ զոհ կբերեմ կյանքս՝ որպես ընծա՝ համուն նրա հավերժական գոյի ու անխափան երթի...

Հայ մեծամուն պատմաբան Լեոն Արցախյան անվանել է «հակապատմական միջամտություն», առանց որի «անհնար է երևակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը»: Իսկ փառապան Մոնթե Մելքոնյանն այսպես է ասել. «Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը»: Մի՞թե այս երկու հայորդիների մտքերի միջև զուգահեռները տեսանելի չեն: Տեսանելի են, այն էլ՝ շատ պարզ ու անխառն: Այո, Արցախի գոյությունն անհրաժեշտ նախապայման է նաև Մայր Հայաստանի գոյության համար:

Ղարաբաղյան շարժման բուն նպատակը հենց միացումն էր Մայր Հայաստանին, իսկ ամենավիճարկ արդյունքը՝ ազատ ինքնորոշման իրավունքի իրացումն ու մեր պատմական հողերի մի մասի վերադարձն ու հայկականացումը: Գիտե՞ք, այլ հարց է՝ ինչպիսի կարգավիճակ ունենք մենք այժմ: Ի հավելումն ասվածի՝ պարզ է ու ակնհայտ՝ ինչ կարգավիճակում էլ լինենք, Արցախը Մեծ Հայքի, մեր պատմական Հայաստանի մի մասն է, անբաժանելի՝ մասը: Հենց այս ճշմարտության հստակ գիտակցությամբ սկսվեց այս շար-

ժումը ու բեն դժվարին ուղիով, սակայն հայ ժողովրդի ծոցից ելած քաջածին որդիների մեծագույն սխրանքի ու ոգու արիության, հաղթելու անհաղթ օրհանի ու պատմական արդարությունը վերականգնելու պողպատակուռ կամքի շնորհիվ վստահորեն սկսեցին իրենց հարձակումը մի Նոր, նախկինում չեղյալ դարաշրջանի մեկնակետ:

Արցախն ամեն գնով պաշտպանելը յուրաքանչյուրիս սրբազան պարտքն է ու կոչումը: Իրավ, «հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ դրա պակասից...»: Ուստի մոռցնական այս խոսքերը պետք է մեր մեջ միշտ արթուն պահեն նաև հոգևոր հայրենիքի վսեմ գաղափարակաճը, որպեսզի միշտ ապավինենք մեր բազմի գոյությանը, հարկ եղած դեպքում անգամ մեր կյանքը պատրաստ լինենք զոհել հայրենիքի վաղվա օրվա և նոր արշալույսների համար:

Անշուշտ, արցախյան հիմնախնդրի իրավական կոնտեքստը պետք է փնտրել նաև պատմության հուշույթներում ու քառուղիներում: Առաջին հերթին պետք է ասել, որ Արցախը Մեծ Հայքի պատմական մասնագնեցից մեկն է, գոյություն է ունեցել այն ժամանակներում, երբ դեռ աշխարհի երեսին, քարտեզի որևէ կետում չի եղել «Արցախ» անվանված պետությունը: Արցախի բունակցումն այդ «տարածքային միավորին» իրականացվեց Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության կողմից 1921թ. հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ, որով ոտնահարվել են Արցախի բնիկ ժողովրդի իրավունքները և մասնավորապես՝ ինքնորոշման իրավունքը: Այստեղից կարող ենք բխեցնել, որ Արցախի բունակցումն Արցախյան ի սկզբանե զուրկ է եղել իրավական հիմքերից, և վերջին հաշվով հենց խորհրդային իշխանությունն է այդ իրավունքների խախտման իրականացումը ու գլխավոր մեղավորը: Միայն այն փաստը, որ հաշվի չի առնվել Արցախի ժողովրդի կամքը, և տեղի է ունեցել ինքնորոշման իրավունքի կոպտագույն ոտնահարում, բավական է՝ հիմնավորելու, որ Ղարաբաղի փոխանցումն Արցախյանի կազմ իր ելույթով ու նշանակությամբ ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ բռնազավթում, անբարե, որն իրականացվել է Հայաստանի և Արցախի բռնի մասնատման հետևանքով:

Ինքնորոշման սկզբունքի մասին խոսելիս պետք է ասել, որ նրա արմատները խորն են ու հասնում են մինչև 18-րդ դար, երբ ԱՄՆ-ը 1776թ. հուլիսի 4-ին ընդունեց անկախության հռչակագիրը: Ամենևին էլ պատահական չէ, որ ամերիկյան հեղափոխությունը որակվեց որպես «ինքնորոշման բացառիկ օրինակ»: Այս սկզբունքի հետագա զարգացումը կապված է Ֆրանսիական հեղափոխության առաջնորդների անվան հետ: Միջազգային հարաբերությունների շրջանակներում այս սկզբունքն ընկալվել է որպես փիլիսոփայական կոնցեպցիա՝ հետագայում որոշ հայեցակարգային փոփոխություններով վերածնակերպվելով քաղաքական կոնցեպցիայի, այնուհետ վերածելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի, որը լատինական հասկացության հարապատասխան էր իրավունքի հիմնարար սկզբունքին: «Ինքնորոշման իրավունքը առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ նրա իրականացումն էական պայման է մարդու անհատական իրավունքների երաշխավորման ու պահպանման և այդ իրավունքների խախտմանն ու զարգացման համար»: Դեռ ավելին, ԱՄԿ-ի կանոնադրությամբ նախատեսված հողավածներով՝ միջազգային այդ կառույցի մեջ մտնող բոլոր պետությունները պարտավոր են հարգել ժողովուրդների իրավահավասարությունը, նրանց ինքնորոշման իրավունքը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Արցախի ժողովուրդն իր կամքն արտահայտել է 32 տարի առաջ՝ զանգվածային ցույցերով ու հավաքներով, կոչերով ու հարցադիմումներով և միայն հարկադրաբար է դիմել զենքի ու զինված պայքարի, որը լիովին արդարացված էր բոլոր առումներով՝ թե՛ քաղաքական, թե՛ իրավական և թե՛ սոցիալ-տնտեսական: Պատճառն այն էր, որ մեր ժողովրդի կամքի ազատ և խաղաղ դրսևորման Արցախյան իրանգամից հակադրեց բռնի ուժը և ամեն կերպ փորձեց կոտրել արցախահայության վճռականությունն ու անջատողականությունը՝ ընդհուպ մինչև պետականորեն ծրարված ու կազմակերպված կոտորածներ ու ջարդեր: Բայց և՛ Մուսկոլի, և՛ Կիրովաբադյան, Մարաղայում և այլուր Արցախյանի հայ քաղաքացիները ենթարկվեցին անասելի ջարդերի, որոնց զոհ գնացին նաև կանայք ու երեխաներ: Սա հանցագործություն էր՝ ուղղված ոչ միայն հայերի, այլև ողջ մարդկության դեմ: Ընդհանրապես չգրված օրենք է՝ այսօր չես դատապարտում դահիճին, վաղն ինքը կհայտնվես զոհասեղանին: Այնպես որ, միջազգային հանրությունը

պետք է խստորեն դատապարտի այս ոճիրն ու կոնֆլիկտի բանակցային ողջ գործընթացում հաշվի առնի Արցախյանի վարած անողորմ քաղաքականությունը: Արցախյան ինքը վերոհիշյալ փաստարկներով հանդերձ սանձազերծեց պատերազմ ու խայտառակ պարտություն կրեց, ուստի օրինաչափ չեն նրա այն պնդումները, որ Արցախի ժողովուրդը հրաժարվի ինքնորոշվելու՝ օրինական ու արդարացի իրավունքից: Դերենիկ Դեմիրճյանը մի հետաքրքիր միտք է հայտնում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ մենք փորձել ենք ցույց տալ մեր պատրիոսիզմը, թե՛ արդարացի, այն միշտ որակել են որպես մացիոնալիզմ: Այսօր բանակցությունների սեղանին նույն օրակարգն է. Արցախյան Հայաստանը ներկայացնում է որպես ագրեսորի ու համառորեն փորձում ապացուցել դա աշխարհին՝ ինքնորոշման հիմնարար իրավունքին հակադրելով տարածքային ամբողջականության սկզբունքը, որն ի հայտ է եկել Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Եթե ազգերի ինքնորոշման ու տարածքային ամբողջականության (ինչն էլ գործիք է դարձել Արցախյան ժողովրդի՝ Լեռնային Ղարաբաղն օկուպացված համարելու) սկզբունքների հարաբերակցությունն իրավական տեսանկյունից խորքային կերպով քննելու լինենք անգամ, կտեսնենք, որ նման հակադրումը հակաիրավական է, հիմնազուրկ ու ոչ օրինաչափ, քանի որ տարածքային ամբողջականությունը ինքնորոշման իրավունքի սահմանափակում կարող է դիտվել միայն այն պետությունների դեպքում, որոնց կառավարություններն անխտիր ներկայացնում են իրենց տարածքի մեջ մտնող ողջ բնակչությանը:

Արցախը երբեք ոչ մի կերպ չի եղել Արցախյանի մաս՝ ոչ պատմական ու աշխարհագրական տեսանկյուններից և ոչ էլ դե-ֆակտո կամ դե-յուրե: Ասվածին եթե գումարենք նաև այն փաստը, որ 1991թ. անկախության մասին սահմանադրական ակտով Արցախյանը հրաժարվեց խորհրդային Արցախյանի իրավահաջորդը լինելուց և համարեց իրեն Մուսավաթական Արցախյանի (1918-1920թթ.) իրավահաջորդը, ապա միանգամից ակնառու է դառնում այն, որ վերջինիս կազմում Արցախը երբևէ չի եղել: Սա հաշվի չառնելով՝ Արցախյանը մեզ առաջարկում է վերադառնալ «պատմական անցյալ», որը, սակայն, աներևույթ է ու անգո: Հետևաբար, անընդունելի է խախտված իրավունքների նախկին իրավի-

ճակի վերականգնումը: Եվ առնվազն ծիծաղելի է, երբ Արցախյան իր կազմում այսպես ասած՝ «լայն» ինքնավարություն է առաջարկում Արցախի ժողովրդին. չէ՞ որ այդ ժողովուրդը 70 տարի շարունակ գրկանքներ է կրել, և բացի այդ, «ինքնավարություն» բառն արդեն իսկ մեկ ազգի՝ մյուսի նկատմամբ գերակայություն է ենթադրում:

Ես և դու գիտենք, թե ինչ է եղել անցյալում, գիտենք, որ Ղարաբաղը զուտ հայկական տարածք է, գիտենք, որ մերն է, մեր սրտինը, մեր հոգունը, մեր ապագա սերունդներինը: Մենք կանգուն էինք երեկ, կանգուն ենք այսօր ու վստահորեն ասում են՝ կանգուն էլ կմնանք, քանի որ այս երկիր-դրախտավայրի սահմանները հայ անպարտ զինվորն է հսկում: Մեկ սամոսիմետր անգամ մենք չենք նահանջի, մենք մեր հայրենիքն ու անվտանգությունը չենք պատրաստվում զիջել: Մեզանից յուրաքանչյուրը զինվոր է և ունի հստակ առաքելություն: Ես ինքս ցանկանում եմ լավ մասնագետ դառնալ իրավունքի, քաղաքագիտության ու միջազգային հարաբերությունների ոլորտում՝ ի սպաս դնելով գիտելիքներս Արցախի բարգավաճման գործում, բանակցային գործընթացում իմ լուսնային ներդրելով մեզ համար դրական տեղաշարժ արձանագրելու համար: Իսկապես անընդունելի է, որ ըստ միջազգային իրավունքի՝ կոմիտե կողմը, այսինքն՝ Արցախը թեև ունեցել է «պատերազմող կողմի» կարգավիճակ, սակայն առ այսօր ներգրավված չէ բանակցային գործընթացում:

Ես առանձնահիկ եմ, հայկազուն, Քիրս ու Մոռվ եմ, հաչեն ու Թարթառ, հպարտ հայ եմ, անպարտ արցախցի: Նպատակ է դառնալ լավ դիվանագետ ու իրավագետ՝ պատմության խոր իմացությամբ, որովհետև, եթե ցանկանում ես հաջողել, նախ պետք է ինքը քեզ և ապա՝ թշնամուդ ճանաչել սովորես: Սուր Ցզին ասել է. «Եթե ճանաչում ես թշնամուդ և ճանաչում ես ինքը քեզ, հարյուրավոր մարտերում քեզ վտանգ չի սպառնում, եթե ճանաչում ես ինքը քեզ, բայց չես ճանաչում թշնամուդ, ապա մեկ ճակատամարտում կհաղթես, իսկ մյուսում կպարտվես, եթե չես ճանաչում ոչ թշնամուդ, ոչ էլ ինքը քեզ, դու վտանգի մեջ ես յուրաքանչյուր ճակատամարտում»:

Ես և դու գիտենք, թե ինչ է եղել անցյալում, գիտենք, որ Ղարաբաղը զուտ հայկական տարածք է, գիտենք, որ մերն է, մեր սրտինը, մեր հոգունը, մեր ապագա սերունդներինը: Մենք կանգուն էինք երեկ, կանգուն ենք այսօր ու վստահորեն ասում են՝ կանգուն էլ կմնանք, քանի որ այս երկիր-դրախտավայրի սահմանները հայ անպարտ զինվորն է հսկում: Մեկ սամոսիմետր անգամ մենք չենք նահանջի, մենք մեր հայրենիքն ու անվտանգությունը չենք պատրաստվում զիջել: Մեզանից յուրաքանչյուրը զինվոր է և ունի հստակ առաքելություն: Ես ինքս ցանկանում եմ լավ մասնագետ դառնալ իրավունքի, քաղաքագիտության ու միջազգային հարաբերությունների ոլորտում՝ ի սպաս դնելով գիտելիքներս Արցախի բարգավաճման գործում, բանակցային գործընթացում իմ լուսնային ներդրելով մեզ համար դրական տեղաշարժ արձանագրելու համար: Իսկապես անընդունելի է, որ ըստ միջազգային իրավունքի՝ կոմիտե կողմը, այսինքն՝ Արցախը թեև ունեցել է «պատերազմող կողմի» կարգավիճակ, սակայն առ այսօր ներգրավված չէ բանակցային գործընթացում:

Ես առանձնահիկ եմ, հայկազուն, Քիրս ու Մոռվ եմ, հաչեն ու Թարթառ, հպարտ հայ եմ, անպարտ արցախցի: Նպատակ է դառնալ լավ դիվանագետ ու իրավագետ՝ պատմության խոր իմացությամբ, որովհետև, եթե ցանկանում ես հաջողել, նախ պետք է ինքը քեզ և ապա՝ թշնամուդ ճանաչել սովորես: Սուր Ցզին ասել է. «Եթե ճանաչում ես թշնամուդ և ճանաչում ես ինքը քեզ, հարյուրավոր մարտերում քեզ վտանգ չի սպառնում, եթե ճանաչում ես ինքը քեզ, բայց չես ճանաչում թշնամուդ, ապա մեկ ճակատամարտում կհաղթես, իսկ մյուսում կպարտվես, եթե չես ճանաչում ոչ թշնամուդ, ոչ էլ ինքը քեզ, դու վտանգի մեջ ես յուրաքանչյուր ճակատամարտում»:

Ես առանձնահիկ եմ, հայկազուն, Քիրս ու Մոռվ եմ, հաչեն ու Թարթառ, հպարտ հայ եմ, անպարտ արցախցի: Նպատակ է դառնալ լավ դիվանագետ ու իրավագետ՝ պատմության խոր իմացությամբ, որովհետև, եթե ցանկանում ես հաջողել, նախ պետք է ինքը քեզ և ապա՝ թշնամուդ ճանաչել սովորես: Սուր Ցզին ասել է. «Եթե ճանաչում ես թշնամուդ և ճանաչում ես ինքը քեզ, հարյուրավոր մարտերում քեզ վտանգ չի սպառնում, եթե ճանաչում ես ինքը քեզ, բայց չես ճանաչում թշնամուդ, ապա մեկ ճակատամարտում կհաղթես, իսկ մյուսում կպարտվես, եթե չես ճանաչում ոչ թշնամուդ, ոչ էլ ինքը քեզ, դու վտանգի մեջ ես յուրաքանչյուր ճակատամարտում»:

Կարեն ՄԱՐՏԻՈՍՅԱՆ
ԱրԳՅ պարտության եւ իրավագիտության ֆակուլտետի իրավագիտության բաժին, Լ կուրս

1990Թ. ՄԱՐՏԸ

Յ Կերչապետ լուսն եմ նաև զինվորական պարտի ծայրը. «Գրությունը հանգիստ է, Ստեփանակերտում աշխատում եմ կենսապահովման ձեռնարկությունները, կարգավորվում է մի շարք հիմնարկների և դպրոցների գործունեությունը:

24.03.1990թ. Մարզում իրավիճակը լարված է, իսկ պարետը հայտնում է, թե իբր հանգիստ է, արդյունաբերական որոշ ձեռնարկություններ վերականգնում են աշխատանքը, շարունակվում են գյուղատնտեսական աշխատանքները, դպրոցներն սկսել են ուսումնական պարապմունքները, երկաթուղին աշխատում է մասամբ, չորս չվերթով Երևանից տեղ է հասցվել 3,5 տ մթերք, 20 ավիաերթով փոխադրվել է 502 մարդ, մարտի 22-ին հաջավանդի ուղղությամբ բաց են թողնվել չորս ազդանշանային հրթիռներ, որի հետևանքով տներին մեկուսվել է բռնկվել:

27.03.1990թ. Ես օրագրիս նախորդ էջերում նշել եմ, որ 1990թ. Մոսկվան հրապարակել է մի հրամանագիր, որով մեր մարզում հունվարի 15-ից ստեղծվել է արտակարգ դրություն, արգելվել է «Միացում» կազմակերպության և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի գործունեությունը, ասել է թե՛ մարզ գրիվել է իր կողմից ընտրված ղեկավար օրգաններից և թողնվել իրեն խորթ կազմկոմիտեի ճանկերում: Ելքից դուրս գալու և Շարժումը ղեկավարելու նպատակով այսօր՝ մարտի 27-ին, Ստեփանակերտում հրավիրվեց նստաշրջան, և որոշվեց վերականգնել 20-րդ դամարման մարզխորհրդի և նրա գործկոմի գործունեությունը, որը կատարեցրեց պարետ, գեներալ-մայոր Սաֆոնովին, որը հայտարարեց, որ առանց պարետության հետ համաձայնեցնելու, առանց զուգակշռության

սկզբունքներով Հանրապետական կազմկոմիտեի ստեղծման և առանց ԽՍՀՄ ԳԽ վերահսկիչ դիտորդ հանձնաժողովի որոշման նման բնույթի և մասշտաբի միջոցառման պլանավորումը անթույլատրելի է, վերոնշյալ ամսանքը հետ նստաշրջանի անցկացման ժամկետը և տեղը պարտադիր կարգով պետք է համաձայնեցվի: Փաստը մնում է փաստ, որ նստաշրջանն իր գործը կատարեց, և վերականգնված մարզային գործկոմը իր աշխատանքը սկսեց կատարել կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի շենքում, որի վրա ծածանվում է Մայր Հայաստանի պետական դրոշմը, իսկ քանի որ կուսակցության մարզկոմի և մարզգործկոմի շենքերի վրա քաղաքներխուժած կազմկոմիտեի կողմից գաղտագողի տեղադրել էին Արցախյան դրոշմը, այդ երկու հիմնարկների աշխատողներն էլ, ինչ-

պես հարգարժան Սեմյոն Բաբայանն է տեղեկացնում, տեղափոխվել էին կուսակցության քաղկոմի շենք: «Կուսակցություն» բառը գրեթե վերադարձվել է իր սկզբնական դարձյալի պլանումը որոշում է ընդունել նաև ԽՍՀՄ 28-րդ համագումարի գումարման մասին, կուսակցության հաշվետու ընտրական կամապահի անցկացնելու ժամկետների, համագումարի պատվիրակների ընտրության կարգի մասին: Եվ այս հանգամանքը ևս ինչ-որ հույսի նշույլներ առաջացրեց մեր մեջ, և հուսով ենք, որ 28-րդ համագումարը կդառնա պատմական: Տա Աստված, որ այդպես լինի:

Մառլեն ՇԱՆՆԱՋԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող, 20-րդ դարի Սրբիկ, լավագույն մանկավարժ, անհատական թոշակառու

ԱՌՈՐՅԱ

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՎՐ ՕՇԱՆՅԱՆԻ ԾՆԵՂՅԱՆ ՕՐՎԱՆ



Մարտունու հ. 1 դպրոցում ավանդույթ է դարձել Արցախյան գոյամարտի նվիրյալ, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Մավր Օհանյանի ծննդյան օրը կազմակերպել արիության դաս:

Փետրվարի 26-ին դպրոցի գինղել Արամ Խաչատրյանի նախաձեռնությամբ հերոսի անունը կրող ռազմագիտության կարծեստուն 9-րդ «ա» դասարանի աշակերտների համար կազմակերպվեց հերթական արիության դասը: Ներկա էին շրջվարչակազմի ղեկավար Արարատ Մելքոնյանը, Մարտունու քաղաքապետ Հայկ Սարգսյանը, Մ. Օհանյանի ընտանիքի անդամները, դպրոցի ուսուցիչներ:

Դասի ընթացքում աշակերտները ներկայացրին Մ. Օհանյանի կենսագրությունը, անցած մարտական ուղին: Մավր Օհանյանը՝ Մավրոն, ծնվել է 1961թ. փետրվարի 26-ին Մարտունու քաղաքում: 1968-78թթ. սովորել է Մարտունու միջնակարգ դպրոցում: Ծառայել է խորհրդային բանակում:

Երբ սկսվեց Արցախյան գոյապայքարը, հասարակ աշխատավոր Մ. Օհանյանը նվիրվեց հայրենիքի ազատության սուրբ գործին: Կարճ ժամանակում նրան վստահվեց Մարտունու շրջանի 25-րդ մոտոհրաձգային զուսմարտակը, որտեղ տեղակայված էին ինչպես Մարտունու քաղաքի, այնպես էլ հարակից գյուղերի ջոկատները: Գունարակը գտնվում էր Մարտունու հ. 1 դպրոցի շենքում:

Լինելով հմուտ զինվորական՝ Մ. Օհանյանն Ազատամարտի ողջ ընթացքում ցուցաբերել է անձնական խիզախություն և

նվիրվածություն: Մասնակցել է ինչպես Մարտունու շրջանի, այնպես էլ Արցախի տարբեր բնակավայրերի համար մղված ազատագրական և պաշտպանական մարտերին: Գունարակի հրամանատարը մարտական գործողությունների ընթացքում երկու անգամ վիրավորվել է ու կրկին շարք վերադարձել:

Ձինադադարից հետո Մ. Օհանյանը շարունակեց ծառայությունը ՊԲ-ում՝ իր փորձն ու ռազմական գիտելիքները երիտասարդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ:

Ծառայելով տարբեր զորամասերում ու զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ նա 2002թ. ստացել է գնդապետի զինվորական կոչում: 2005թ. նշանակվել է ՊԲ Ն հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ, իսկ 2010թ.՝ նույն դիվիզիայի հրամանատարի հերթապահության գծով տեղակալ:

Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած բացառիկ խիզախության,

վորական թշակի անցնելու կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2011թ. նրան պարգևատրել է «Տիգրան Մեծ» մեդալով:

Պատերազմի տարիներին մարտական գործողությունների ընթացքում բազում փորձությունների միջով անցած Մ. Օհանյանի կյանքի թելը կտրվեց 2012թ. դեկտեմբերի 10-ին՝ դժբախտ պատահարի պատճառով: Նա չհասցրեց վայելել տարիների ընթացքում վաստակած զինվորական հանգիստը:

Արցախյան գոյապայքարով անցած և հաղթանակած Մ. Օհանյանի մարտական ուղին մի հերոսապատում է, որով դաստիարակվում է Արցախի այսօրվա սերունդը, ինչի ապացույցը կայացած արիության դասն էր:

Արիության դասի վերջում հանդես եկավ օրվա հերոսի զինակից ընկեր, Մարտունու քաղաքապետ Հայկ Սարգսյանը: Նա հիշողություններ պատմեց միասին անցած մարտական գործողություններից և 9-րդ դասարանցիներից, առավել ևս՝ տղաներին, պատգամեց միշտ քայլել հերոսների հետքերով ու առաջնորդվել նրանց օրինակով:

Հերոսի ծննդյան 59-րդ տարեդարձի կապակցությամբ նրան ծոնված հեղինակային բանաստեղծությամբ հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն Նարինե Ավանեսյանը:



անձնական արիության, բանակաշինության գործընթացում ներդրած ուրույն ավանդի համար պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, «Անդրանիկ Օզանյան», «Կազեմ Սարգսյան» և այլ հուշամեդալներով:

Բարձր գնահատելով գնդապետ Մ. Օհանյանի երկարատև ծառայությունը զին-

Մավր Օհանյանի ծննդյան հերթական տարեդարձի կապակցությամբ շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի նախաձեռնությամբ և շրջարկկազմակերպությունների միության աջակցությամբ Մարտունու հ. 1 դպրոցում կայացել է թեթև քթիտիկայի մարզական մրցություն:

Մրցությանը մասնակցել են Մարտունու հ. 1, հ.2, Վ. Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարանի, ճարտարի հ. 1, Սոսի և Խնուշինակի դպրոցների թիմերը:

Առաջնակարգ տեղեր գրաված թիմերի մարզիկները պարգևատրվել են մեդալներով և պատվոգրերով:

ԱՌՈՂ ԱՍՐԻՎԱԿԱՆ

ԻՄ ՓՈՐՁԻՑ

Ուսուցիչ և աշակերտի հաջողության հիմքում բացարձակապես կարևոր են երկկողմանի կարողությունն ու ցանկությունը:

Աշակերտների կարողությունները բացահայտելու բազմաթիվ մոտեցումների արդյունքում համոզվել են, որ կարևոր է նաև, թե ինչ պատասխանատվությամբ են ուսուցիչն ու աշակերտը մոտենում իրենց սկսած գործին: Եթե ուսուցիչը կարողանում է բացահայտել աշակերտի կարողությունը, այնուհետև հեշտ կլինի գիտամանկավարժական, հոգեբանական մոտեցումներով սեր և ուսումնասիրման ցանկություն առաջացնել առարկայի նկատմամբ:

Աշակերտի կարողությունների բացահայտումը նախ պետք է սկսել համեմարարված նյութի վերարտադրման, ընկալման մակարդակից: Եթե, այսպես ասած, առաջին փորձությունից զոհ ենք, անցնում ենք հաջորդին: Այժմ տրամադրում ենք նույնչափ նյութ, բայց՝ արտադասագրքային, ինքնուրույն ուսումնասիրման համար: Հետո համեմատում ենք առաջին արդյունքի հետ. եթե առավելություն է նկատվում, շարունակում ենք փորձել: Այնուհետև պատմում ենք որևէ նյութ և մի քանի օրից հետո (հաջորդ հանդիպմանը) ստուգում, թե ինչ է մտապահել: Հետո առանց զգուշացնելու հաջորդ քայլին ուսուցիչը մատուցում է օրվա նյութը և ավարտին աշակերտից պահանջում այն շա-

րադրել տեսրում՝ ստուգելով միաժամանակ և հիշողությունը, և՛ ուշադրությունը, և՛ հետաքրքրությունը: Կայուն հիշողության մեջ համոզվելու համար մատուցել նյութ, որը հարուստ է նոր հասկացություններով ու տերմիններով, տարբերվելով, և ամրապնդման ընթացքում հետևել՝ արդյոք չի՞ շփոթում նոր լսածը: Ուսումնասիրությունների ընթացքում զուգահեռաբար տարբեր միջոցներով (լրացուցիչ նյութ, ֆիլմ, կենսագրական նյութեր, հումորային դրվագներ...) հետաքրքրասիրություն առաջացնել աշակերտի մեջ: Աշակերտի հետ աշխատանքը սկսելիս նրան չպետք է առանձնացնել ընդհանուրից, բացահայտումը պետք է կատարվի աննկատ, ոչ բարձրաձայն, այլապես ծախսողման դեպքում աշակերտը հոգեբանական հարված կստանա, թերահավատությամբ կլցվի իր նկատմամբ: Մանկավարժական մոտեցմամբ և հմտությամբ պետք է տարբերակել՝ աշակերտը գնահատականի՞ համար է սովորում, թե՞ պարզապես հետաքրքիր է առարկան, և գիտելիքի պահանջ ունի:

Գնահատականը ազդեցիկ դեր չպիտի խաղա աշակերտի կարողությունների, գիտելիքների ու հմտությունների զարգացման գործում: Արդյունավետ են հոգեբանական մոտեցումները (ապրես, հոյակապ է, դու կարող ես...):

Զձանձրացնել աշակերտին դասագրքի նյութն անընդհատ

կրկնելով, ձգտել չսահմանափակվել դասագրքով, յուրաքանչյուր հանդիպման ընթացքում աշխատել ինչ-որ նորության, հետաքրքիր դեպքի, լրացուցիչ նյութի մատուցումով (անկախ թեմայից) հագեցնել հանդիպումը, որպեսզի աշակերտը հաջորդ պարապմունքին ներկայանա նորի ընկալման սպասելիքով:

Միշտ ժամանակ գտնել աշակերտի հետ սխտեմատիկ պարապելու, այլապես նա կըլինի պատճառաբանությունների, որն էլ տանում է անպատասխանատվության: Կարևոր պայման են աշակերտի հետ արտադասարանական և արտադպրոցական պարապմունքները:

Ուսուցիչը չիմացածը չպետք է շրջանցի. աշակերտի անպատասխան մնացած հարցերը թերահավատություն են առաջացնում ուսուցչի հանդեպ, որն էլ հանգեցնում է անհարգալից վերաբերմունքի, հետաքրքրության բացակայության: Անհրաժեշտ է ինքնակրթությամբ զբաղվել ամեն օր:

Կարևոր է ուսուցչի կերպարը որպես մարդու և որպես բարեխիղճ, նվիրված, պատասխանատու աշխատողի, որն իր գործին մոտենում է խղճի գագուսով, այլ ոչ թե որպես պարտականություն:

Նյութի հաղորդումը պետք է զուգորդել հոգեբանական ապրումներով (ցավ, ուրախություն, վեհություն, հպարտություն, ստորություն...)՝ այն արտահայ-

տելով խոսքի ելևէջներով, միմիկայով: Ուսուցիչը նյութը չպիտի պատմի, այն պետք է բացատրի, կատարի վերլուծություններ, անցկացնի զուգահեռներ, ճամփորդի ժամանակի և տարածության մեջ, վեր հանի դրականն ու բացասականը, քննարկի նմանություններն ու տարբերությունները, կատարի եզրահանգումներ, առանձնացնի զվիավորում ու երկրորդականը, պարզաբանի պատճառահետևանքային կապը՝ այս ամենին ներգրավելով աշակերտին:

Ուսուցիչը պետք է կարողանա աշխատել աշակերտի հետ՝ ելնելով նրա տարիքային, հոգեբանական առանձնահատկություններից և անձնական հետաքրքրություններից:

Ուսուցիչը պետք է հավատ ներշնչի աշակերտին, որպեսզի նա համոզվի իր կարող լինելու մեջ: Աշակերտին պետք է հասցնել, որ գիտելիքն արժեք է և մարդու միակ բացարձակ սեփականությունը:

Օրվա պահանջ է վերականգնել ուսուցչի դրը հասարակության մեջ, անհրաժեշտ է, որ նա իրեն պաշտպանված զգա: Աշակերտը պետք է ուսուցչին ընկալի որպես հարգված անձնավորություն:

Փորձենք՝ վստահելով մեր ուժերին, և ամեն ինչ կավարտվի հաջողությամբ:

Գայանե ՄԱԹՎՈՍՅԱՆ
Ճարտարի Հր. Պողոսյանի
անվան հ. 5 միջն. դպրոց

Շնորհավորանք
**ՎԱՏԱԿԱԾ ՍԵՐ ՈՒ
ՀԱՐԳԱՆԸ**



«Դու, որ հարազատ ծնունդն ես դարի, Քայլում ես անդուլ, առաջ ընթանում, Քայլում ես այնպես ծանր ու վիթխարի, Ասես աշխարհն ես չալակած տանում...»:

Պարույր Սևակ

Սիրելի, հարգելի, գնահատելի... Ամենատարբեր, բայց միևնույն ժամանակ ամենադարձված գագսմունքներն են խառնվում, երբ խոսում կամ գրում ես այն մարդու մասին, ով իր օրինակով սովորեցնում է ճիշտ սովորել, աշխատել, ճիշտ ընկերություն անել ու ճիշտ գնահատել ունեցածը:

Ռիտա Գրիգորյան... Մտավորականի ու ազնվագարն մարդու մի անզուգական կերպար, որն ունի 38 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ, բարի ու ազնիվ, բանիմաց ու խորագետ, մարդասեր, հումորով հարուստ, մեղմ ու սկզբունքային, հասնող ու աջակից, դիմացինի սխալների հանդեպ հանդուրժող, նրբանկատորեն ուղղող, հարթող ու հաշտեցնող:

Ռուսերենի նվիրյալ, իր սաներին սիրող, ուսուցչի վեհ կոչմանն արժանի անձնավորություն, հավատարիմ կին, զեղեցիկ ընտանիքի մայր. ահա այսպես կարելի է բնորոշել տիկին Գրիգորյանին:

Անբասիր ուսուցչի վառ օրինակ, որն իր ազնիվ էության, ամբարած խորը գիտելիքներով, աշխատասիրությամբ, նվիրվածությամբ, բարեկիրթ ու ջանասեր տեսակով, իր բարեհոգությամբ ու սրտացավությամբ 60-ամյա մի պատմություն է կերտել և ահա այսօր, հանձնարարի միջնակարգ դպրոցի իր գործընկերներով շրջապատված, տոնում է ծննդյան օրը:

Սովորողների կրթության ու դաստիարակության գործում անզուգահատելի վաստակ ունի Ռիտա Գրիգորյանը:

Համեստությունը, ջանասիրությունը, առարկայի խոր իմացությունը, պատասխանատվության բարձր զգացումն օգնել են նրան՝ մանկավարժական գործունեության առաջին իսկ տարիներից, առաջին իսկ օրից վաստակելու աշակերտների, ծնողների, գործընկերների հարգանքը, սերն ու վստահությունը:

Դասը նրա համար ասես նվիրումի արարողություն լինի, ու տարիների փորձով իմաստնանալուց հետո անգամ դասարան է մտնում մի յուրահատուկ երկուշուրվ ու սրտի տրոփով, ոգևորության բարձր զգացումով: Կարելի է ասել, որ նրա համար ավելի հրապուրիչ բան չկա, քան երեխաների առջև ռուսերենի զեղեցկությունն ու հնայքը բացահայտելը: Նրա աշակերտները թե՛ շրջանային, թե՛ հանրապետական օլիմպիադաներին ակտիվ մասնակցություն են ունենում: Այս ուսումնական տարում տիկին Գրիգորյանի աշակերտներից երկուսը անցել են օլիմպիադայի հանրապետական փուլ և ցուցաբերել լավ արդյունքներ:

Մենք՝ ուսուցիչներս, ուրախ ենք, որ ունենք Ռիտա Գրիգորյան և վայելում ենք նրա ընկերությանը:

Երկար և հեշտ կարելի է խոսել մեր հոբելյարի մասին, քանի որ նա ապրել է բացառիկ հարուստ և արգասաբեր ստեղծագործական կյանք, անցել մի ուղի, որ արժանի է հիացմունքի և երախտագիտության:

Տիկին Գրիգորյան, Ուզում ենք կյանքում երջանիկ լինեք, Ուզում ենք կյանքում արցունք չտեսնեք, Ուզում ենք շողաք, ժպտաք ու ապրեք, Ուզում ենք սիրեք ու սիրված լինեք:

Թող Ձեր վաստակած սերն ու հարգանքը, որոնք պտուղներն են աշխատանքի նկատմամբ Ձեր մեծ նվիրումի և պատասխանատվության, ուղեկից լինեն Ձեզ ողջ կյանքի ընթացքում:

Սիրով ու երախտագիտությամբ շնորհավորում ենք Ձեր 60-ամյա հոբելյանը և մաղթում առողջություն, երջանկություն կյանքում և անբացույց երախտագիտություն Ձեր սաների աչքերում:

Խնձրիստանի միջնակարգ դպրոցի տնօրինություն, մանկավարժական կոլեկտիվ

ԱՍՈՒՊ

ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻՆ ՄԻ ՄԱՐԳԱՐԻՏԱԾԱՅԼ ԱՍՏՂ ՀԱՎԵԼՎԵՑ...



Փետրվարի 20-ին կյանքին հրաժեշտ տվեց Մարգարիտ Թարանյանը, ում շատերը ճանաչում են որպես մեր Գոյապայքարի ազատամարտիկ: «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Մարգարիտի անունը ընդմիշտ ընդելուզված կմնա մեր բանակի պատմությանը, քանզի ապրած 60 տարիների կեսը նա իմաստավորել է հայոց բանակին ծառայելով՝ միշտ զինվորի կողքին, միշտ զինվորի հետ: Պատերազմից հետո նա շարունակում էր ծառայել ՊԲ կազմգործակալաբազման բաժնում որպես ավագ սպա: Չորսըստից և խաղաղ աշխատանքի անցնելուց հետո էլ նա զինվորի կողքին էր՝ ՊՆ կից հիմնադրած Կանանց խորհրդով:

Մասնագիտությամբ բանասեր էր, ինչն այնքան ներդաշնակում էր նրա քնարական եռանդը, իսկ կոչունով՝ զինվորական: Իր անվանը հարիր մարգարտագեղ ու նրբիրան մի աղջիկ էր՝ ներհուն ու փխրուն ներաշխարհով, երբ աշխատանքի բերումով առաջին անգամ, գրեթե երկու տասնամյակ առաջ, հանդիպեցին: Գերհամեստ բնավորության պատճառով հրաժարվեց՝ ասելով, թե ինչ մի կարևոր բան է արել, ընդամենն իր պարտքն է կատարել հայրենիքի հանդեպ: Փոխարենը սիրով պատմեց Կանանց ջոկատի մյուս անդամների մասին: Իր մասին խոսելիս՝ ժլատ, միջնդեռ մարտական ընկերների մասին պատմում էր ոգևորությամբ ու անթաքույց հպարտությամբ: Նրա պատմածով հեռակա ծանոթացա ջոկատի մյուս աղջիկների հետ, որոնք ինձ համար նույնպես դարձան թանկ ու սրտամոտ՝ Կարինե Դանիելյան, Մարգարիտա Մարգարյան, Գայանե Առստամյան, Անահիտ Թամրազյան, Անահիտ Պետրոսյան, Վարդուհի Գևորգյան, Եվգենյա, Արեգա... Հետո բախտ ունեցա նրանցից մի քանիսի հետ անձամբ ծանոթանալու, և ծնունդ առավ այդ քաջարի աղջիկների մասին հաղորդումների մի շարք, որտեղ փորձում էի համատեղել «Կին» և «պատերազմ» իրարամերձ ու անհամադրելի հասկացությունները, որովհետև կինն ի վերուստ կյանքի խորհրդանիշն է, պատերազմը՝ մահվան...

Մարգարիտի հետ մեր հաջորդ հանդիպմանն իմացա, որ ստեղծագործ խառնվածքով նուրբ հոգու տեր այս աղջիկը պատերազմական թոհուրոհում ժամանակ էր գտնում իր խոհերն ու ապրումները թղթին պահ տալու: Նա օրագիր էր պահում, որի էջերում հառնում է մաքուր ու խիզախ մի սիրտ, որի ամեն զարկն ու թրթռոցը հայրենասիրությանը է տրոփում: Այս գրառումները

րից տեղեկանում ենք, թե երբ և ինչպես է ստեղծվել Կանանց ջոկատը, ինչ մարտական ուղի են անցել աղջիկները, ինչ ոգևորություն ու հիասթափություններ են ուղեկցել նրանց այդ դժվարին ճանապարհին:

«92-ի ամռանը, երբ թշնամին ընդհուպ մոտեցել էր Ասկերանի մատույցներին, պատահաբար քաղաքում աչքիս ընկավ մի հայտարարություն. «Արցախի կանանց ջոկատ ստեղծելու համար հավաքագրվում են կանայք և աղջիկներ»: Գիտեի, որ դժվար կլինի համոզել հարազատներին, իսկ շրջապատում ամեն մեկը յուրովի կնկնարարում ինձ քայլը, բայց թող վերամբարձ չհնչի, եթե ասեմ, որ գրականության, պատմության դասերին սերտած հայրենասիրության դասերը ինձ դեմ հառնում էին իրենց կոնկրետության մեջ, մասնավորվում, առարկայանում, և ես որոշեցի զինվորագրվել: Չէ՞ որ մեր պատմության մեջ, փառք Աստծո, քիչ չեն հայոց աշխարհի փափկասուն տիկնանց հայրենասիրության փառահեղ դասերը»:

Իսկ հետո պարապմունքներ՝ ծանր ու հոգնեցուցիչ... «Ծրագիրը բարդ է, - կարդում ենք Մարգարիտի օրագրում, - քաղաքացիական պաշտպանություն, առաջին բուժօգնություն, կապ, քարտեզներ, ֆիզիկական պատրաստություն: Նույնիսկ ստիպում են բահերով պաշտպանական խրամատներ փորել: Բոլորը չէ, որ դիմանում են: 25 հոգուց մնացել ենք 12-ը»:

Պատերազմի կանանց ինչ-որ մեկը շատ դիպուկ բնութագիր է տվել՝ հրեշտակները ռազմի դաշտում: Այդ հրեշտակները և՛ զենքով էին կռվում, և՛ իրենց ներկայությամբ ուժ ու ինքնավստահություն ներշնչում վհատներին, գիտեին վիրավոր զինվորին վիրակապելիս շքեղ հուսաշող բառեր: Եվ շքեղունով ասված այնքան անհրաժեշտ այդ բառերն ասես խլացնում էին արկերի որոտն ու ռումբերի պայթյունը, կյանք ներարկում ուժասպառ մարմիններին: Մինչև այսօր էլ զարմանում են, թե որտեղից այդ փխրուն էակների մեջ այդքան կամք ու տոկունություն, որ մինչև պատերազմի ավարտը, հրադադարի երկար սպասած օրը, եթե մահը շրջանցել է նրանց, մնացել են իրենց երկրի զինվորը, քանիցս նայել են մահվան աչքերին և արհամարհելով հաղթել նրան:

92-ի աշնանը Շուշիի ուսումնասնարգական գումարտակում ռազմական պատրաստություն անցած ջոկատն արդեն պատրաստ էր մարտական առաջադրանք կատարելու: Ձուկատի երկու Մարգարիտները, որոնք շատ մոտ ընկերուհիներ էին և նույն օրն էին ցուցակագրվել, տարբեր ունակություններով աչքի ընկան. Մարգարիտ Մարգարյանը, որին ընկերները տարբերելու համար Մարգո էին կոչում, դարձավ դիպուկահար, իսկ Թարանյանը որոշեց բուժքույր դառնալ, որովհետև, իր իսկ խոստովանությամբ, մարդ սպանելու խիզախություն չուներ: Ահա նրա օրագրային գրառումներից մեկը. «Իմ մեջ այդքան տղամարդկություն չկա, որպեսզի դիպուկահար դառնամ, ես ավելի լավ է զինվորի կյանք փրկել: Իսկ Մարգոն իսկական տղամարդ աղջիկ է, նա փայլուն դիպուկահար է: Մեր ջո-

կատն արդեն պատրաստ է մարտական առաջադրանք կատարելու, և անհամբերությամբ ենք սպասում այդ օրվան»: Այդ օրը չուշացավ. N գումարտակից երեք բուժքույր խնդրեցին և իրենց առաջին մարտական առաջադրանքին ուղարկվեցին Մարգարիտ Թարանյանը, Անահիտ Թամրազյանն ու Անահիտ Պետրոսյանը: Աղջիկները միշտ կատակով էին պատմում այդ օրվա մասին, երբ ամբողջ գիշեր նստած իրենց պլանկոնսպեկտներն էին կրկնում՝ պատրաստվելով վաղվա ճակատամարտին: Տղաները քմծիծաղով էին նայում, իսկ տարիքով ամենամեծը՝ Սուրեն ապին, հեզմուն է. «Էդ լեցիաներով պիտի մեզ վիրակապեք»: «Տղաները երևի չեն պատկերացնում, թե որքան ենք հուզվում իրենց համար: Ուղղակի սարսափելի է, երբ պատկերացնում են, որ նրանցից մեկը կարող է զոհվել», - գրում է Մարգարիտը: Բարեբախտաբար, այդ մարտագործողության ժամանակ հայկական կողմը ոչ զոհ, ոչ վիրավոր է ունենում: Մի քանի մարտերից հետո անհետ չքանում են ներքին երկվությունն ու մտատանջությունները. «Մի ավելորդ անգամ համոզվեցի, որ միշտ է եղել իմ վճիռը: Տղաները մեր կողքին չեն տրտմում, չեն վախենում, զգույշ են խոսում՝ հանկարծ ավելորդ բառեր չօգտագործեն, օգնում՝ ինչով կարող են: Նույնիսկ հասցնում են ինչ-որ բան գտնել ու նվիրել մեզ՝ ծաղիկ կամ քաղցրավենիք»:

Գիտեի՞մ արդյոք տղաները, թե ինչպիսի ապրումներ են պաշարում առաջին անգամ մարտադաշտ ոտք դրած, մահվան դեմ-հանդիման կանգնած այդ քնքուշ էակներին: Երևի գուշակում էին, որովհետև իրենց հոգատարությամբ ասես ջանում էին հատուցել աղջիկների ներկայությունը, երբ ծառից ծառ օրորոցի մնաց ծոծր էին կապում, որ մրկան Մարգարիտը գետնին չքնի, կամ երբ ծաղիկներ էին նվիրում նրանց: Աշխարհում ինչի՞ հետ կարելի է համեմատել մանուշակի փունջը, որ այդ թոհուրոհում նվեր էին ստանում աղջիկները (հետո Մարգարիտը պիտի խոստովաներ. «Դա իմ ստացած ամենաթանկ նվերն էր»)...

Հասկանալի էր Մարգարիտի խեղճությունը, աշխարհում ամենից շատ սիրում էր ծաղիկներ՝ դաշտային, ջերմոցային, պարտեզի թե լուսամուտագոգին թաղարներում աճեցրած, կարևոր չէր: Ծաղիկների հետ կապված բազում դրվագներ կան նրա օրագրում, որոնք վկայում են, որ պեղագետի նրա հոգին ամենամեծը պահերին անգամ հմայվել է բնության այդ հրաշքներով. «Աղջիկներով երիցուկներից պսակներ ենք հյուսել ու մտածում ենք վաղվա ճակատամարտի մասին», - գրել է օրագրում: Ամռանալի մի դրվագ էլ կա այնտեղ. «Բարձրանում ենք հենակետ: Երեկոյան հարձակում ենք նախատեսում: Ուրթերիս տակ տրորվող մանուշակներն այնքան

անուշ են բուրում: Մի քանի քայլ հետ են ընկնում ու մանուշակ փնջում: Մեր տղաներից Վարդանը հետ է նայում, տեսնում է՝ ինչով են զբաղված, բարկանում է. «Դու աչքիս չես հասկանում, չէ՞, ուր ես գնում: Մանուշակ մի հավաքիր, տեղանքն ուսումնասիրիր, որ նահանջելու ճանապարհն իմանաս, այլ ոչ թե շփոթվես ու գնաս ընկնես...»: «Էլ չշարունակեց: Գցեցի մանուշակներս, աչքերս չորս արած նայում էի շուրջս, փորձում էի մտապահել ամեն քար, ծառ, փորձում էի մտապահել հետդարձի ճանապարհս»:

Օրագրային գրառումները Մարգարիտի անցած մարտական ուղու սակավաթիվ վավերագրերն են, քանի որ միշտ չէր հաջողվում թղթին հանձնել օրվա ապրածն ու զգացածը: Ընկերների թանկ կորուստների հետ այդպես էլ երբեք չհաշտվեց նրա հոգին, ոչինչ ի գորու չէր մեղմելու անդարձ հեռացածների կորստի ցավը: Թվում էր՝ անվախճան է երթը տառապանքի ուղիներով... Եվս մի պատահիկ այն օրերի հուշերից. «1994 թվական: Դուբայում: Միայն ամուսնը գրելուց փշաքաղվում են, սարսուռ է անցնում մարմնով: «Դժոխք» բառը տեղին է այս պարագայում: Ամեն օր՝ զոհեր, վիրավորներ: Չորս հոգով ենք՝ Կարինեն, Անահիտը Թամրազյան, Գայանեն և ես: Ականների տարափի տակ հանում ենք վիրավորներին, օգնում, հասցնում հոսպիտալ: Ծանր զոհերի գնով առաջ է շարժվում գունդը: Կորցրիք մեր լավագույն տղաներից շատերին... Երբ մտանք Բաշարաթ, ուրախության մջ մի նշույլ զինվորների աչքերում. չափազանց թանկ գնով նվաճեցինք այդ գյուղը»:

Ընկերների կորստից մխուժ էր Մարգարիտի սիրտը, իսկ օրագրում՝ խտանում կակիժը. «Սփոփիչ մի բան կա միայն, - գրում է աղջիկը, - գրավում ենք մեր հողերը... Դարհադարի լուրն առավ Կարմիրակառնի մատույցներում, բայց Պաշտպանության բանակը մնաց նրա տունը, նրա հարազատ օջախը: Հարաբերական անդորրի՞ ոչ պատերազմ, ոչ խաղաղություն զգեցած հետագա օրերի իր բոլոր մտահոգություններն ու իղծերի կիզակետը մնացին Հայոց բանակն ու հայ զինվորը»:

Նրա իմաստասիր կյանքի հետպատերազմյան շրջանը ևս հարուստ է ազգաշահ գործունեությամբ: Մի առանձին դրվագում է արժանի Մարգարիտի երկարամյա հասարակական գործունեությունը Հայ օգնության միության արցախյան կառույցում՝ թե՛ որպես առենապետուհի, թե՛ որպես շարքային հոմակառն: Հեռավոր Ամերիկայից Թարանյան ընտանիքին հղած ՀՕՍ-ի կենտրոնական վարչության ցավակցական գրության մեջ արժանվույն է գնահատվում նրա անբասիր ծառայությունը. «Անկասկածորեն, հանգուցեալին յիշատակը, որպես հերոս, ազատամարտիկ, Հայ Օգնության Միության Արցախի Միաբերի օրինակելի անդամ, միշտ վառ պիտի մնայ ՀՕՍ-ի մեծ ընտանիքի անդամներուն և համայն հայութեան սրտերուն մեջ: Անոր դերակատարութիւնը Արցախեան ազատագրական պայքարի պատմութեան էջերուն մէջ յատուկ տեղ կը գրավէ, օրինակ դառնալով իւրաքանչիւր հայուհիի»...

Ինչպես ասվեց, բանակն ու զինվորը միշտ էլ նրա հասարակական գործունեության առանցքն են եղել: Վերջին տարիներին ՊՆ առընթեր գործող Կանանց խորհրդի հիմնադիր և ղեկավար անդամներից էր: Ուշագրավ է համագործակցությունը Մարգարիտի և ՀՀ ԿԳՍՄՆ «Ընտանիք» կենտրոնի ու Գյումրու հ. 4 արհեստագործական ուսումնարանի հետ: Արդյունքում կյանքի են կոչվել բազմաթիվ կրթամշակութային ծրագրեր ու միջոցառումներ՝ ի նպաստ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության կարևոր գործի: Բանակը նրա հպարտությունն էր, հանապազօրյա աշխատանքի իմաստը, իսկ զինվորը՝ ամենահարազատ ընկերը: 2018թ. հունիսին մեր վերջին գրույցում նա հրաշալի ձևակերպում է արել. «Յուրաքանչյուր հայի պարտականությունն է օրուգիշեր մտածել մեր սահմանը պահող զինվորի, սպայի, զեներալի մասին, լինել նրանց կողքին, որովհետև նրանց ենք պարտական այս փխրուն խաղաղության համար: Թող Աստված անի երբեք պատերազմ չլինի, և նրանք բոլորը խաղաղությամբ վերադառնան իրենց ընտանիքների գիրկը»:

Հայրենիքը բարձր է գնահատել իր նվիրյալ զավակի ծառայությունները՝ արժանացնելով նրան «Անբասիր ծառայության համար» 1-ին և 2-րդ աստիճանի մեդալների, «Մայրական երախտագիտություն» մեդալի, ՀՀ «Երկրպագ» կամավորականների միության հուշամեդալի, Հայրենիքի պաշտպանության համար «Տիգրան Մեծ» Ասպետաց և Փառքի շքանշանների, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի, ՀՀ ՊՆ Անդրանիկ Օզանյան մեդալի:

Մարգարիտ Թարանյանն այդպես էլ չամուսնացավ՝ միշտ մնալով նույն անոթխած, զուսպ ու հպարտ աղջիկը, ինչպիսին ճանաչել են տարիներ առաջ: Իր բաժին կյանքն ապրեց ինչպես շենշող մարգարիտ՝ իրենից շողարձակող լույսով ջերմացնելով շրջապատն ու մտերիներին, իսկ մարգարտախեցու մեջ պարփակելով սեփական ցավերն ու դժվարությունները: Գիտեի՞ք, որ հիվանդ է, բայց երբեք չնվաճեց ու չղժգոհեց: Չէր սիրում տրտմույնը, երբեք իր վատ տրամադրությունը չէր փաթաթի որևէ մեկին, նրա ներկայությունն իսկական տոն էր մտերիների համար: Միշտ բարյացակամ, ուշադիր և հոգատար էր հատկապես մարտական ընկերների նկատմամբ: Ու երիցս սիրված ու գնահատված էր նրանց կողմից: Անանձնական կյանքով ապրած հայուհուն զինվորականին վայել պատվով հրաժեշտ տվեցին՝ պատվո պահակախմբով ու զինվորական նվազախմբով: Վերջին հրաժեշտի եկած նրա մարտական ընկերները հին օրերի հուշով նվերներով էին եկել՝ շքեղ ծաղիկներով ու... կոնֆետներով, որոնք աշխարհափոխ եղած իրենց ընկերուհին տարավ իր հետ... Մեր քաղաքից մի վառ գույն պակասեց, Արցախը ևս մի նվիրյալ կորուստ ունեցավ, իսկ երկնակամարին մի մարգարտափայլ աստղ հավելվեց...

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԾԱԽՑԻ ՄԱՐԶԻԿԱՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՄԻՋԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Օլիմպիական մարզածելերը Արցախում զարգացնելու և Արցախի աշխարհին ճանաչելի դարձնելու նպատակին էին քերես միտված վերջերս արցախցի մարզիկների մասնակցությունն ու ձեռք բերած հաջողությունը միջազգային մրցահարթակներում:

Արցախի օլիմպիական և պրոֆեսիոնալ բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ և մարզիչ Նարեկ Աբրահամյանի սաներ Էրիկ Առտամյանը և Աշոտ Բեգլարյանը բռնցքամարտի աշխարհի չեմպիոն (գերծանր քաշային

ես չորս մարտուն հաղթանակ ունեցավ, որոնք այնքան էլ հեշտ չէին: Մրցաշարին լավ էր պատրաստվել:

Մարզի խոսքով՝ յուրաքանչյուր մրցաշար դրական ազդեցություն է ունենում մարզիկի ներուժի վրա՝ ավելացնելով մարտական փորձը, ազդելով մարզիկի հոգեբանական և մարզական պատրաստության վրա: Ն. Աբրահամյանը ցավով նշեց, որ միջազգային հարթակներում ոչ բոլորն են ճանաչում Արցախի շանրապետությունը, և հույս հայտնեց, որ արցախցի մարզիկների պարբերաբար մաս-



Փետրվարի 20-21-ը արցախցի սամբիստները Մինսկում մասնակցեցին Բելառուսի Յանրապետության նախագահ Ա. Լուկաշենկոյի մրցանակների խաղարկությամբ «A» կարգի սամբոյի միջազգային առաջնությանը, որին մասնակցում էին երկրագնդի ուժեղագույն սամբիստ մարզիկները: Հերթական՝ 24-րդ անգամ անցկացվող մրցաշարը, որին մասնակցում էին 22 երկիր ներկայացնող մարզիկներ, նշանակալի երեւույթ է մարզական օրացույցում, որը բարձր հեղինակություն է վայելում աշխարհում:

կարգում) Նիկոլայ Վալուեի անվան միջազգային գավաթի խաղարկությունում զբաղեցրել են առաջին մրցանակային տեղեր: Նարեկ Աբրահամյանը, որը գլխավորում էր չորս մարզիկներից բաղկացած Արցախի պատվիրակությունը, հայտնում է, որ առաջնությանը մասնակցում էր ավելի քան 250 մարզիկ աշխարհի տարբեր տեղերից:

Մարզիչը գոհացուցիչ է համարում սաների ձեռքբերումը և առանձնաձև էրիկ Առտամյանի հաղթանակը՝ պայմանավորված նրա՝ 40 կգ քաշային կարգում հանդես գալով: Վերջինս 38 կգ քաշային կարգ ունի, որը, սակայն, նրան չխանգարեց արժանի հաղթանակ տանել: Հինգ տարի է, ինչ էրիկը զբաղվում է բռնցքամարտով: Միջազգային առաջնությունում սա նրա առաջին հաղթանակը չէ: Հաղթելու ճանապարհին այս առաջնությունում չորս մարտուն հաղթեց: Աշոտ Բեգլարյանը հանդես եկավ 57 կգ քաշային կարգում: Նա

Մարզիչ Էռնեստ Միրզոյանի սաներ Դավիթ Գրիգորյանը (82 կգ)՝ սպորտային սամբո, Վահագն Չալյանը (82 կգ)՝ մարտական սամբո, Դավիթ Պետրոսյանը (82 կգ)՝ մարտական սամբո, Արմեն Մնացականյանը (62 կգ) մասնակցեցին մրցաշարին 33 սամբոյի հավաքական կազմում: 33 սամբոյի հավաքականը ներկայացնող չորս արցախցի սամբիստներից միայն Դավիթ Պետրոսյանին հաջողվեց գրավել 3-րդ մրցանակային տեղ մարտական սամբոյում:

Մարզիկ Դավիթ Գրիգորյանի խոսքով՝ մրցաշարը կազմակերպված էր բարձր մակարդակով, իսկ իրենք պայքարի էին դուրս եկել արժանի մրցակիցների հետ:

Իսկ փետրվարի 26-ից մարտի 2-ը ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում կայացած բռնցքամարտի առաջնությունում մասնակից արցախցի չորս մարզիկներից երկուսը նվաճել են ոսկե մեդալ:

Քնարական

ԳԻՇԵՐՎԱ ԽՈՐ, ՀԱՄԱՐԱՄԱՔՈՐ ԶԳԱՆՄՈՒՆՔՆԵՐ

Ես եկել եմ, գիշեր, Դու լցվել ես ուզում Անմեղության մեջ, Ու կարոտս ցավոտ: Քարափներից անդին Լուռ հունցվել եմ Մուժուժ

Սարսափն անդունդների, Ու վիհերը քարոտ... Ինձ տար սարսուռներիդ Խոյանքների խառնիր, Թող ներարկվեն հոգիս Շշուկներդ սմբած... Դու իմ մեռնության հետ Մտերմորեն վարվիր, Թող օրորվի հոգիս՝ Համրությունդ գրկած: Նայիր՝ նայեմք իրար, Մեկ է, չենք տրվելու Էությանդ մթին, Սարսուռներիդ անմեղ, Անուրջների մման Այլուր չենք ցրվելու Քո մթությանը փափուկ, Քո լուռությամբ ահեղ...

Գիշերը լուռ է, Իսկ ես՝ նկարիչ, Վրժինն առնում եմ սկիզբ թաթախում, Ես նկարում եմ, իսկ իմ նկարից, Գիշերը մտայլ Մոթերն է կախում... Ահա և երկնի աստղերը ծաղկուն Ջրերի ցուլում ուզում են պարել, Իսկ ալիքները քրքջում, ճողվում, Լիզում են ծովի ափերը քարե: Լուսինն աստղոտ երկնքում Մի կտոր անպ է ուսել, Իսկ ուռնին ծովափին Մի բուռ ստվեր է հյուսել: Ես նկարել եմ գիշեր՝ Խորհրդավոր սև ու սև...

Գիշեր է լուռ: Մութն է եկել գիշերելու: Մութ ու խավար Սև շորերում Ու ծորերում Ծվարում է Անտառն անբառ, Սև աստղափայլ Տերևներով Մտորում է Իր հուշերում: Մթության մեջ Դոփեց մի քայլ, Իսկ հոգու մեջ Շրջվեց սիրով Լեցուն մի սայլ, Ու մի կարոտ մնաց քնած: ***

Ես չեմ սովորել, բայց ես տես՝ գիտեմ, Որոնել եմ քեզ, իսկ դու չգիտես, Գուցե դու գիտե՞ս, որ չես սովորել, Բայց ես ինչ գիտեմ, իսկ դու ինչ գիտես, որ ես չգիտեմ: ***

Գիշեր է սև, Աչքերը մութ, Ոտքերը սև, Մարմինը բութ, Միտքը խավար, Հոնքերը թուխալ, Մազերը սև, Թափված ուսին, Իսկ հայացքում՝ Երեմակ լուսին...

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԻՄ ԱՌՋԵՎ ՆՈՐ ԴՈՆԵՐ ԲԱՑԵՑ. ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ



հետ հարցազրույցում Ա. ԱՐՈՒՇԱՆՅԱՆԸ կիսվեց տպավորություններով:

Ովքեր ճանաչում կամ առավել ևս երկրպագում են արցախցի մարզիկ և մարզիչ, կիոկուշին կարատեի Եվրոպայի հնգակի և աշխարհի անմահադեպ եռակի չեմպիոն Արթուր Առուշանյանին, հավանաբար, մեղմ ասած, զարմանք կապրեն՝ լսելով հերթական մրցաշարում նրա ցուցաբերած արդյունքի մասին: Փետրվարի 22-ին Վառնայում (Բուլղարիա) կայացած կիոկուշին կարատեի SENSHI-5 պրոֆեսիոնալ լիգայի մրցաշարում Արթուր Առուշանյանը պարտություն կրեց դա՛վախ մարզիկ Ալիշեր Կարմենովի կողմից:

Հայրենիք վերադարձավ դրսևորած կամքի ուժի համար շնորհված առանձին մրցանակով և նոր աշխարհայացքով: «Լուսարար»-ի

համայնքի ներկայացուցիչների հետ: Շատ հաճելի և ուրախալի մթնոլորտում հարցազրույցներ ունեցանք: Դնեպրում սա իմ երկրորդ սեմինարն էր, որ վարեցի: Տրամադրվել էի, որ պետք է այնպես սեմինար անցկացնեմ, որ բոլորը կրկնակի տպավորված լինեն: Դա հաջողվեց ինձ: Ամեն ինչ լավ անցավ, բոլորը գոհ էին և տպավորված:

- Իսկ ուժերը հերիքո՞ւմ են մրցաշարից հետո սեմինար վարել՝ տեղափոխվելով մի տեղից մյուսը: Հանգստանալ հասցնո՞ւմ եք:

- Ավելի շատ ուժերը խլում են ճանապարհները, բայց դա արդեն սովորական է դարձել: Օրվա մեջ 3-4 ժամ հանգիստը լիովին բավական է ուժերը վերականգնելու համար:

- Ինչպես նշել էիք նախորդ հարցազրույցներից մեկում, սեմինարների ժամանակ հատուկ ծոցատետր եք պահում, որտեղ արագ գրանցում եք նոր մտքերն ու Ձեզ համար նոր սովորելու որեւէ բան: Դնեպրում հնարավորություն և առիթ կայի՞ր գրանցումներ անելու համար:

- Այո, գրանցումներ անելու հնարավորություն և առիթ կային, բայց ոչ թե նոր բան սովորելու, այլ այդ պահին նոր մտքեր և տեխնիկաներ գրանցելու համար:

- Արթուր, պարզաբանեք, թե ինչ է SENSHI մրցաշարը և ինչով է այն տարբերվում մյուս մրցաշարերից:

- SENSHI-ին կիոկուշին կարատեի նոր պրոֆեսիոնալ լիգան է, որի կանոնները տարբերվում են կիոկուշինի ավանդական կանոններից: Այդտեղ կան զցուններ, հարվածներ գլխին ձեռքերով և արմուկներով:

- Ովքե՞ր էին մասնակցում մրցաշարին: Մարզական ինչպիսի՞ վիճակում էիք Դուք:

- Մասնակցում էին 9 զույգ տարբեր մարզիկներ 11 երկրներից: 65 կգ քաշային կարգում պայքարեցի դա՛վախ մրցակից Ալիշեր Կարմենովի հետ: Մարզավիճակս, իմ կարծիքով, միջին

աստիճանի էր, բանի որ կային տարբեր հանգամանքներ: Սա սպորտ է, որտեղ ամեն ինչ պետք է սպասել: Պարտությունը մնում է պարտություն:

- Արթուր, նշե՞ք, որ մեզ՝ Ձեզ երկրպագողներին համար բավականին անսովոր է ընդունել, որ կիոկուշինում բարձրագույն տիտղոսների հասած լեգենդար մարզիկը կարող է պարտություն կրել, իսկ Դուք ի՞նչ եք զգում:

- Ինչպես արդեն ասացի, սպորտում ամեն բան կարող է պատահել, իսկ պարտությունն իմ առջեւ նոր դռներ բացեց ու ձեւավորեց նոր աշխարհայացք, որոնք ապագայում շատ բան կփոխեն: Հայրենիք վերադարձա իմ մարզիչ Սպարտակ Գասպար-

յանի հետ, որի հետ արդեն մտածել ենք հետագա մարտավարությունը: Պետք է տեխնիկական և տակտիկական հմտություններս լրիվությամբ վերանայեմք և փոփոխություն անենք:

- Այսինքն՝ հնարավոր է, որ առաջիկայում կրկին բարձունքում փայլի կիոկուշինի համաշխարհային աստղը արդեն նորովի՞:

- Ես աշխատելու եմ նորից բարձունքի հասնել:

- Տեղյակ ենք, որ մրցաշարից հետո մեկնել եք Ուկրաինա երեքօրյա սեմինար վարելու: Ինչպե՞ս անցավ այն:

- Դնեպր քաղաքում երեքօրյա սեմինար վարեցի, որի ընթացքում հասցրեցի հանդիպել հայ

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՏԻ ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ

Սկիզբը՝ «Լուսարարի» նախորդ համարում

ՄԿՐ-ՈՒՄ

Մեր ավտոբուսն առաջացավ դռներից ներս: Անցավ երկու ծաղկանոցների միջով, և ես տեսա երկու արձաններ: Ես չիմացա, թե ինչ արձաններ էին դրանք:

Շատ չկարողացա նայել. ավտոբուսն առաջ էր ընթանում: Անցանք մի շենքի մոտով: Շատ հին էր երևում: Քարերը հնացել էին: Տեղ-տեղ շատ քիչ մամուռներ կային: Այդ մեկն էլ չիմացա ինչ շենք է:

Առաջ գնալով՝ հասանք մի տեղ: Այդտեղ էլ ավտոբուսը կանգ առավ:

Յերթով իջանք ավտոբուսից: Առջև տարածվում էր ամբողջ Մելքոնյանը՝ երկու դպրոցներով, երկու գիշերօթիկ շենքերով, մի ճաշարանով և մեկ սպորտշենքով: Կենտրոնական մասում գտնվում էին ծաղկանոցներ: Բազմատեսակ ծաղիկներ կային՝ արևադարձային հատուկ ծաղիկներ:

Ավտոբուսի բազաժանոցից հանեցինք մեր իրերը և դարաբաղցիներով հավաքվեցինք: Մեկը մյուսին օգնելով հասանք գիշերօթիկ դպրոցներ (աղջիկները՝ իրենց շենքը, իսկ մենք՝ մեր շենքը):

Մուտքի մոտ երևացին Մելքոնյանի մի քանի սաներ և մեզ օգնեցին շենք մտնել: Բոլորս հավաքվեցինք միասին (ոչ միայն դարաբաղցիներս) և սպասում էինք: Երևաց մի մարդ՝ մի թուղթ ձեռքին (հետագայում իմացա, որ շենքի հերթապահներից է): Կարդաց՝ Կրույր, Արմեն (էջմիածնից եկած) և Առնոլդ, եկեք հետևիցս:

Յետևելով՝ հասանք մի սենյակ: Մտանք ներս: Պարոնը մեկական բանալի տվեց մեզ և դպրոցի հին սաներից մեկին կարգադրեց մեզ ուղեկցել դեպի N 16 սենյակ: Տղայի անունը Ջորայր էր: Եկավ բացեց դուռը, պատուհանները (ավելի ճիշտ՝ պատուհանը, քանի որ մի պատուհան կար), և սենյակը լուսավորվեց:

Լավ նայեցինք սենյակը, և ամենքս ընտրեցինք մի ծածուկ ու թաքուն տեղ՝ սենյակի անկյուններից մեկը, որտեղ մտնողը չի տեսնի:

Ամենքս մի-մի տեղ գրավելուց հետո զբաղվեցինք մեր շորերը դասավորելով: Ամենքիս հասնում էր մի-մի սեղան, պահարան, աթոռ, ինչպես նաև՝ անկողին:

Մոտ կես ժամ խլեց մեզանից շորերը դասավորելը: Այնուհետև փոխվեցինք և դուրս ելանք: Դուրսը մարդ չկար: Միայն տեղ-տեղ մատարանների վրա մատած էին զույգեր: Մելքոնյանը շատ տարօրինակ թվաք՝ դժվար հարմարվեցինք և ծանոթացանք:

Չգիտեմք ուր գնալ: Չախ կողմի վրա կար բետոնե մի մայր: Մայրով գնացինք հասանք այն բացատին, որտեղ մեր ավտոբուսն էր կանգնել: Առաջ նայեցինք և լսեցինք տղաների ձայներ: Գնացինք: Մելքոնյանցիների մեծ մասը հավաքված էր փոքր մարզադաշտում: Ոմանք բասկետբոլ կխաղային, ոմանք՝ ֆուտբոլ, իսկ ոմանք էլ մատած զրուցում էին: Նստեցինք և նայում էինք խաղացող տղաներին ու աղջիկներին: Մի պահ հիշեցի իմ նայած ֆիլմերը քոլեջների, համալսարանների և այլ կրթական բարձր դպրոցների մասին: Չիշում էի, թե ինչպես աշակերտները խաղում էին բասկետբոլ (մեծամասնությունը): Եվ Մելքոնյանը նման էր այդ դպրոցներին:

Հանկարծ խաղացողներից մեկը, մեզ նկատելով, եկավ և ասաց.

- Բարև, տղաք: Դուք հավանաբար նորեկներ եք: Ներկայանամ, անունս Հայկետ է, խնդրեմ, ձեր անունները:

Մենք ամենքս ասացինք մեր անունները, և նա առաջարկեց մեզ խաղալ: Մենք մերժե-

ցինք. ճիշտն ասած, քանի որ նորեկներ էինք և նա չէինք ուզում խաղալ: Բայց Առնոլդն ասաց, որ ինքը բասկետբոլ սիրում է և կուզեր խաղալ (իհարկե, մեզ ասաց): Բայց քանի որ շատ անաչկոտ երեխա է, չխաղաց:

Շատ նայելուց հետո իջանք գիշերօթիկ (մարզադաշտը գտնվում էր մի քիչ վերևում):

Մտանք սենյակներն ու այլևս դուրս չեկանք մինչև ընթրիք: Ջրաղված էինք մեր շորերն ավելի կարգին դասավորելով: Ծանոթացանք սենյակին ավելի մոտիկից:

Հնչեց գանգը: Չիմացանք ինչի համար էր, և դուրս եկանք միջանցք: Ոչ ոք չկար միջանցքում: Քայլեցինք միջանցքով և հանդիպեցինք մի մեծ տղայի:

- Կներեք, կարո՞ղ եք ասել՝ ինչի գանգն էր այս,- հարցրեցինք մենք:

- Ընթրիքի,- պատասխանեց:

- Իսկ որտե՞ղ պիտի ընթրենք,- հարցրինք:


Նա մեզ ցույց տվեց որտեղ է ճաշարանը, և



մենք քայլեցինք դեպի ճաշարան:

Ներս մտանք: Մի մեծ դահլիճ էր այդ ճաշարանը: Բավականին բարձր առաստաղ ուներ՝ կարծես կտուրին կպած: Բայց հարկ կա նշելու, որ ճաշարանի վերևը մի հարկ էլ կար՝ «քանթին» համար: Քանթինը քնելուց առաջ մի փոքր ընդմիջում է, ցանկացողները կարող են գնալ և գնել թխվածքներ, սառը հյութեր և այլն: Բայց ասեմ, որ քանթինը ամբողջապես հարկ չէ (ե՛ս նկար 1-ը):

Առաջ գնացինք: Խոհարարները ճաշ էին բաժանում: Այդ օրը բրինձ էր: Կային նաև հավելյալ ուտելիքներ սեղանի վրա: Ով ու-



զում էր, վերցնում էր: Ընդհանրապես դա լի-նում էր սալաթ, վարունգ, լոլիկ, զեյթուն և այլն:

Ճաշը վերցնելուց հետո մի ազատ սեղան գտանք և նստեցինք: Շատ համոզվ չէր: Հաշվեց նաև, որ դեռ սովոր չէինք Մելքոնյանի ճաշերին: Դարաբաղյան բրնձից տարբերվում էր, մի տարօրինակ, ոչ հաճելի համ կար մեջը:

Մի կերպ ճաշելուց հետո դուրս եկանք ճաշարանից: Գրեթե ամբողջ Մելքոնյանի սաները դրսում էին, ոմանք (զույգերը) մատարանների վրա զրուցում էին, ոմանք (փոքր սաները) պարզապես խաղում էին: Պաղ հով էր փչում: Սովերները հետզհետե կորչում էին: Կամաց-կամաց մութը սկսում էր կոխել:

Մենք (մենք ասելով նկատի ունեմ՝ ես, Առնոլդը և Միքայելը), քանի որ թեթև էինք հագնված, շտապեցինք սենյակ: Դռան մուտքին հեռախոս կար: Հայաստանի տղաներից մեկը ինչ-որ քարտ էր մտցնում ու հանում: Մոտեցանք:

- Արտյոմ, ի՞նչ քարտ է ձեռքիդ,- հարցրինք մենք:

- Սրանով կարող եք գանգել, բայց մեջը դատարկ է, օգտագործած է,- ասաց Արտյոմը:

- Իսկ նորերը վաճառո՞ւմ են:

- Այո, ինչու չէ: Դուրս եկեք քաղաք և կտեսնեք:

Մենք թողեցինք Արտյոմին և քայլեցինք դեպի մեր սենյակ: (Այդ ժամանակ միասին չէինք՝ ես էի, Առնոլդը և հայաստանցի մի տղա): Փափագ առաջացավ քարտ գնել և գանգել մեր տուն: Սկսեցի ավելի ու ավելի կարոտել մեր տունը: Իսկ Միքայելը մի քանի օր շարունակ չէր ծիծաղում. տանը շատ էր կարոտում և, իր ասելով, գլուխը անտանելի կերպով ցավում էր:

Որոշեցինք հաջորդ օրը մի մեծի հետ քաղաք դուրս գալ և քարտ գնել: Բայց հետո մի նոր դժվարություն երևան եկավ. չգիտեինք Դարաբաղի միջազգային կողը:

Շտապեցինք սենյակ. բոլորիս նոթատետրերը հանեցինք-ստուգեցինք, բայց Դարաբաղի միջազգային կողը չկար, չէինք գրել: Որոշեցինք գնալ հերթապահից հարցնել, մի-գուցե իմանա:

Դուռը ծեծեցինք ու ներս մտանք: - Պարոն, կարո՞ղ է իմանաք Դարաբաղի միջազգային կողը,- հարցրեցինք մենք:

- Մեկ վայրկյան սպասեք, հարցնեմ,- պատասխանեց հերթապահը:


Յետո վերցրեց հեռախոսը և գանգեց չգիտեմ որտեղ, հավանաբար՝ փոստ:

- Ը՛-ը-ը, can you tell me please the international code of Karabakh,- հարցրեց պարոնը:

Յետո հեռախոսից մի կնոջ ձայն լսվեց, և պարոնը թղթի վրա թվեր էր գրում: Այնուհետև ցած դրեց լսափողը և թուղթը մեկնեց մեզ՝ ասելով.

- Հավանաբար սա է Դարաբաղի կողը, փորձեցեք:

Մենք խորին շնորհակալություն հայտնեցինք պարոնին և դուրս եկանք: Այժմ մնում էր



հեռախոսաքարտ գնել: Որոշեցինք հայաստանցի մեծ տղաների խնդրել մեզ տանել քաղաք քարտ գնելու:

Մեզ հաջողվեց հայաստանցի երկու տղաների խնդրել մեզ քաղաք տանել: Պարոնից թույլտվություն վերցնելով՝ համարյա գիշերը (այստեղի ժամով 7-8) դուրս եկանք քաղաք: Բարեբախտաբար շատ հեռու չգնացինք՝ Մելքոնյանից հեռացանք մոտ 300 մետր:

Տառը դուրսից վերադարձանք Մելքոնյան՝ ամենքս մի-մի հեռախոսաքարտով: Ամեն ինչ պատրաստ էր, մնում էր միայն գանգահարել մեր ծնողներին: Սիրտս թրթռում էր անհամբերությունից: Ձեռքերս դողում էին համարը հավաքելիս: Ուզում էի ինչքան հնարավոր է՝ շուտ գանգել տուն:

Վերջապես հավաքեցի երկար, բայց հեշտ համարը: Սպասում էի լսափողը վերցնելուն: Սպասեցի շատ թե քիչ, և հանկարծ լսափողը վերցրին.

-There is a doubt in your number. Please check number and try again:

Յետո լսվեց մի ուրիշ այն.

- ;;; Այնուհետև մի ուրիշը.

- Ձեր հավաքած համարը սխալ է: Խնդրվում է ստուգել այն և մեկ անգամ ևս փորձել:

Մենք մնացինք շվարած: Մեր հավաքած համարը ճիշտ չէր: Հարկավոր էր մի ուրիշ համար գտնել:

Բայց որոշեցինք մեկ անգամ ևս փորձել: Ջգուշությամբ, հատ-հատ հավաքեցինք համարը և... նորից մույն պատասխանը: Կասկած չկար, որ մեր հավաքած համարը սխալ էր: Որոշեցինք նորից մտնել հերթապահական սենյակ:

Դուռը ծեծեցինք և ներս մտանք:

- Պարոն, այս համարը սխալ է,- ասացի ես:

- Որտեղ է՞ն գիտեք:

- Մենք փորձեցինք, բայց չեղավ:

- Լաւ, սպասեք փորձեմ մեկ անգամ ևս:

Եվ նա նորից գանգեց փոստ, իմացավ մի ուրիշ համար և տվեց մեզ: Մենք շնորհակալություն հայտնելով դուրս եկանք: Մոտեցանք հեռախոսին և հավաքեցինք նոր համարը: Սպասեցինք, սպասեցինք և... նորից մույն պատասխանը: Մենք ամբողջովին հուսախաբ եղանք: Հույսներս կտրվել էր, որ կարող ենք գանգել Դարաբաղ: Դեռ երբ մտանք հերթապահական սենյակ, պարոնն իր վերջնական պատասխանը տվեց.

- Ուրեմն դեպի Դարաբաղ միջազգային կող չկա:

Մենք քարացանք: Ուրեմն Դարաբաղ չէինք կարող գանգել. միջազգային կող չկա:

Բայց ես պետք է գանգեի: Նախքան գալս ծնողներիս ասել էի, որ տեղ հասնելուն պես կգանգեմ: Եթե չգանգեմ, ծնողներս ի՞նչ պիտի մտածեն...

Ես որոշեցի գանգել Հայաստան, բարեկամներիս մեկին ասել, որ այստեղից հնարավոր չէ գանգել Դարաբաղ, և թող ծնողներս գանգեն:

Եվ այդպես էլ արեցի: Յերթապահից իմացա Հայաստանի կողը և գանգեցի: Այս անգամ, փառք Աստծո, ընկա Հայաստան: Ինչ որ պետք է, ասացի, և... ժամանակը վերջացավ: Հանգստացած դուրս հանեցի հեռախոսաքարտը, և գնացինք սենյակ: Ճիշտն ասած, ուրախ էի, որ գանգեցի և աշխուժացել էի:

Մտա սենյակ ու նստեցի սեղանին: Անգործությունից չէի իմանում ինչ անել: Նստած զրուցում էինք ես և Առնոլդը, իսկ Միքայելը, ինչպես ասացի, մեր սենյակում չէր:

Որոշ ժամանակ անց պատի ռադիոյից, ինչպես մելքոնյանցիներն են ասում (յուրաքանչյուր սենյակի պատերից մեկի վրա կա, այսպես կոչված, ռադիո: Երբ հերթապահը ուզում է մի բան հայտարարել, ձայնը լսվում է ռադիոյից), լսվեց հերթապահի կմկմացող ձայնը (այդ հերթապահը, որ հետագայում իմացա, ուսուցիչ է, մոտ տասը լեզու գիտեր: Եվ իրար խառնելով՝ դժվար էր խոսում):

- Բոլոր աշակերտները, որոնք այսօր եկած են, հաճին զալ հերթապահական սենյակ:

Մի քիչ հետո բոլորը, որոնց էին վերաբերում պարոնի ասածները, հավաքվեցին հերթապահական սենյակում: Պարոնը, տեսնելով, որ արդեն բոլորս հավաքվել ենք, ասաց.

- Բոլորը հետևեցեք զիս:

Մենք հետևեցինք նրան և հասանք մի սենյակի: Պարոնը դուռը բացեց և մեզ տվեց մեկական բարձ և վերմակ: Այնուհետև ամենքը գնացին իրենց սենյակները:

Հանեցի նոր, խշխշան, բուրունճավետ սպիտակեղենը և փռեցի անկողնու վրա: Ինչպես որ հարկն է, պատրաստեցի մահճակալս, և քիչ հետո գանգը տվեց քնելու: Շուտափույթ հանվեցի ու պառկեցի ճերմակ, օսլայահոտ սպիտակեղենի վրա:

Շուտով քնեցի հանգիստ քնով: Համարյա մոռացել էի Դարաբաղը և շատ չէի կարոտում:

(շարունակելի)

Վրույր ՉԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 18.03.2020թ.: